4 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 198(4816)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը շնորհավորում են Գարեգին Բ Վեհափառին



***Այսօրվանից եւ առաջիկա երկու օրերին Մայր աթոռում եւ ամբողջ երկրով մեկ մեծաշուք հանդիսություններով եւ արարողություններով կնշվեն Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ծննդյան 60-րդ եւ գահակալության 12-րդ տարեդարձերը: Բացի եկեղեցական արարողություններից, որոնց շարքում Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում կկատարվի եպիսկոպոսական ձեռնադրություն, ինչպես նաեւ «Զվարթնոց» նորակառույց ու գողտրիկ եկեղեցու օծման արարողություն եւ, դարձյալ Մայրավանքի տարածքում բացումը կկատարվի Գարեգին Բ կաթողիկոսի անունը կրող շքեղ եւ արդիական գրադարանի, տեղի կունենա նաեւ Վեհափառ հայրապետի 60-ամյակին նվիրված հանդիսություն օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ինչպես նաեւ պաշտոնական ճաշկերույթ «Ֆլորենս» ռեստորանային համալիրում: Այս կապակցությամբ Երեւան են ժամանել սփյուռքահայ բազմաթիվ հայրենակիցներ, Մայր աթոռի բարերարներ: Արդեն սկսվել են հասնել նաեւ շնորհավորական ու ողջույնի գրերը, որոնցից Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի շնորհավորագիրը հրապարակում ենք ստորեւ:***

Վեհափա՛ռ Տեր

Համաշխարհային հայկական կոնգրեսի ու Ռուսաստանի հայերի միության, ինչպես նաեւ անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ ձեռնադրման տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Ձեր գահակալության ժամանակահատվածը նշանավորվեց Հայ առաքելական եկեղեցու իրական զարթոնքով, համազգային նշանակություն ունեցող նախագծերի իրագործմամբ: Սա դարձավ ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Ռուսաստանում, Հայ եկեղեցու վերականգնման ու լայն շինարարության մի ժամանակաշրջան, ինչի ընդգծված օրինակը եղավ Մոսկվայում հայկական վանահամալիրի հիմնարկեքը, որի գմբեթին օրերս տեղադրվեցին խաչեր՝ օրհնված Ձերդ Սրբությամբ եւ նշանավորված Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ու բազմաթիվ այլ այցելուների ներկայությամբ:

Ամենախորին հարգանքի են արժանի Ձեր անխոնջ ջանքերն՝ ուղղված առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձեւավորմանը հասարակության շրջանում եւ խաղաղության պահպանմանը մեր պատմական հայրենիքում ու ամբողջ հայկական Սփյուռքում:

Թույլ տվեք հայտնել Ձեզ անկեղծ երախտիք ու շնորհակալություն այն ջերմության, ըմբռնման ու օժանդակության համար, որը Դուք մշտապես ցուցաբերում եք մեր նկատմամբ՝ Ռուսաստանի հայերի միության ու Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադրման առաջին իսկ օրերից:

Վեհափա՛ռ Տեր, ի սրտե մաղթում եմ Ձեզ երկար տարիների կյանք, հոգեւոր ու ֆիզիկական կարողություններ՝ Աստծուն, մեր Եկեղեցուն ու հայ ժողովրդին հավատարիմ ծառայելու համար:

**Վեհափառ Տիրոջ հոտին անվերապահորեն պատկանող**

**ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարի կամքի դեսպան**

# Սեյրան Օհանյան. Բանակում մահվան յուրաքանչյուր դեպք մեզ համար ողբերգություն է




**Հոկտեմբերի 29-ին ԼՂ Հադրութի շրջանի զորամասերից մեկի տարածքում գտել էին 19-ամյա Արմեն Մոզրովյանի դին: Վերջինս բանակ էր զորակոչվել Արթիկի զինկոմիսարիատից: ՊՆ-ի պաշտոնական վարկածով՝ զինվորը հանկարծամահ էր եղել, եւ կատարված դիահերձմամբ պարզվել էր, որ մահը վրա է հասել սրտի պսակաձեւ անոթների շրջանառության սուր խանգարման հետեւանքով:**

**Երեկ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, անդրադառնալով բանակում հանկարծամահ եղած զինվորի դեպքին, հավաստիացրեց, որ նա եղել է բացարձակապես առողջ: Նախարարի ներկայացմամբ՝ Մոզրովյանը զորամասի լավ ծառայողների ցանկում էր, եւ հրամանատարությունը պատրաստվում էր նրան սերժանտի կոչում տալ: Հարցին, թե ինչպես է պատահում, որ անառողջ երիտասարդներին բանակ են տանում, նախարարը ընդգծել է, որ բժշկական համակարգը գործում է անձամբ իր եւ առողջապահության նախարարի վերահսկողության տակ, եւ երիտասարդները եռաստիճան ստուգում են անցնում:**

*Տես էջ 2*

# «Նորին նախագահական մեծության» մանկական հիվանդությունը

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

**Հին, կարծեմ արաբական ասացվածքը մարդու ամենամեծ ողբերգություն է համարում այն, որ նա «չգիտի, որ չգիտի»: Սա թերեւս վերագրելի է Իլհամ Ալիեւին: Մանավանդ՝ վերջին մեծախոսությունների նկատառմամբ: ՀՀ ԱԳՆ-ն շատ դիպուկ է բնութագրել «նորին նախագահական մեծության» պահվածքը: Դրանից, ինչպես եւ սպասելի էր, ադրբեջանական կողմը «խորապես խոցվել է»:**

**Ոչինչ արտառոց չկա. Իլհամ Ալիեւը շարունակում է ներկայանալ իբրեւ «անկախ եւ ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարող, ինքնաբավ երկրի առաջնորդ»: Եվ, ըստ ամենայնի, զավեշտն էլ հենց դա է: Քանի որ իրականում անկախ, ինքնաբավ եւ ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարող երկրները խնդիրներն իրենք են լուծում: Ադրբեջանի պարագայում դա այդպես չէ: Այն պարզ պատճառով, որ եթե իրականում նրա հիմնական խնդիրը «ԼՂ հարցի լուծումն է», ապա այդ ուղղությամբ Իլհամ Ալիեւը որեւէ ինքնուրույն քայլ չի անում:**

*Տես էջ 8*

# Միքայել Մինասյանը հրաժարական տվեց եւ...

***Նախագահ Սերժ Սարգսյանի այսօրվա հրամանագրով իր դիմումի համաձայն զբաղեցրած պաշտոնից ազատվել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Միքայել Մինասյանը:***

**Միքայել Մինասյանը երեկոյան հարցազրույց տվեց News.am-ին՝ ընդգծելով. «Ես գնում եմ՝ օգնելու Հովիկ Աբրահամյանին՝ գալիք ընտրությունները պատճաճ նախապատրաստելու հարցում եւ կարծում եմ, որ դա է այսօր առաջնահերթությունը»: Հարցին, թե ինչո՞ւ է այսօր այդքան ուշադրություն դարձվում ՀՀԿ նախընտրական շտաբի ձեւավորմանը՝ Մինասյանը պատասխանել է. «Հանրապետության նախագահը տրամադրված է լավագույն ընտրությունների անցկացմանը: Մենք պատրաստվում ենք ոչ միայն ապահովել նախագահի կուսակցության հաղթանակը գալիք ընտրություններում, այլեւ նպաստել այնպիսի ընտրությունների անցկացմանը, որից Հայաստանը դուրս կգա ուժեղացած եւ վստահորեն դեպի ապագա նայող: Իսկ դրա համար այսօր արդեն ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները: Կարծում եմ այս ընտրությունները որակական հեղափոխություն են լինելու մեր երկրի ու բոլորիս համար»:**

**Վերջում՝ պատասխանելով հարցին, թե կարելի՞ է արդյոք ենթադրել, որ սրանով կավարտվի պաշտոնաթողությունների շղթան, Մինասյանը պատասխանել է. «Նման հարցերի պատասխանը գիտի միայն մեկ մարդ՝ հանրապետության նախագահը»:**

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Բանասիրական գիտությունների դոկտոր, արեւելագետ Արմանուշ Կոզմոյանի անդրադարձը Դենի դը Ռուժմոնի «Սերը եւ Արեւմուտքը» եւ «Սիրո առասպելները» գրքերի հայերեն առաջին հրատարակությունների առիթով (թարգմ.՝ Ալ. Թոփչյան): Գրական բավիղներում. գրականագետ Դավիթ Գասպարյանի հայացքը Գուրգեն Մահարի-Պարույր Սեւակ առնչություններին: Նորայր Ադալյանը Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի «Զույգն առանց ջրի կամ ինքնասպանություն» նոր բեմադրության մասին: Դրվագներ Ռոմեն Կոզմոյանի բեյրության աշխատանքային տարիների հուշ-մանրապատումների շարքից: Փարիզաբնակ երկու հայ նկարիչներ Վահե Պարսումյանը եւ Ռուբեն Նաճարյանը՝ Հարություն Թորոսյանի ներկայացմամբ: 80-ականների Երեւանի՝ շատերիս համար թանկ ու սիրելի ամենամտավորական ու ամենափնտրված բացօթյա վայրը՝ Նկարիչի տան սրճարանն ու իր մթնոլորտը, ըստ Հասմիկ Սեյմուր-Հարությունյանի: Մ. Բ.**

# Ռուսաստանի հայերի միությունը համաձայնագիր է կնքել Մոսկվայի պետհամալսարանի հետ



Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանը** համագործակցության շրջանակային համաձայնագիր է կնքել Մոսկվայի պետական համալսարանի (ՄՊՀ) պատմության ֆակուլտետի դեկան Սերգեյ Կարպովի հետ: Պաշտոնական արարողության ընթացքում կողմերն ընդգծել են, որ համաձայնագիրը հնարավորություն կընձեռնի գիտակրթական ոլորտում ավելի համակարգային համագործակցության՝ ՄՊՀ-ի բազայի վրա: Իր ելույթում Արա Աբրահամյանը շեշտել է, որ հայ-ռուսական հարաբերությունները մշտապես եղել են բարեկամական ու զարգացել են. «Այս մասին վկայում են Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի օրերս կայացած պետական այցը Ռուսաստան եւ հանդիպումները ՄՊՀ-ի պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ: Վստահաբար՝ Ռուսաստանի ու Հայաստանի միջեւ երկկողմ հարաբերությունների խորացման առումով մեծ դեր է խաղում Ռուսաստանի հայկական համայնքը եւ մասնավորապես Ռուսաստանի հայերի միությունը՝ որպես խոշորագույն համառուսաստանյան կազմակերպություն», նշել է Արա Աբրահամյանը:

ՌՀՄ նախագահը նաեւ ընդգծել է, որ իր ղեկավարած կազմակերպությունը կաջակցի ՄՊՀ-ի այն ուսանողներին, որոնք սովորում են հայոց պատմություն, եւ երիտասարդ գիտնականների համար հնարավորություններ կստեղծի՝ այցելելու այն երկիրը, որի պատմությունը նրանք ուսումնասիրում են: Աբրահամյանը նաեւ խոսել է Ռուսաստանի ու Հայաստանի գիտական շրջանակների պարբերական համագործակցության ու դրանում երիտասարդ գիտնականների ներառման կարեւորության մասին:

Ռուսաստանի հայերի միությունը նույն օրը շրջանակային համաձայնագիր է ստորագրել նաեւ «Մոսկվայի բելառուսներ» հասարակական կազմակերպության հետ՝ ի դեմս վերջինի ղեկավար, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Սերգեյ Կանդիբովիչի: Այս կապակցությամբ Արա Աբրահամյանն ընդգծել է Հայաստանի, Ռուսաստանի ու Բելառուսի սերտ դաշնակցային հարաբերությունները՝ ԱՊՀ-ի ու ՀԱՊԿ-ի շրջանակներում: Աբրահամյանը նշել է, որ այս հարաբերությունները պետք է զարգացնել ժողովուրդների մակարդակով: **Հ. Ա.**

# ԵՄ-Հայաստան. «Հակամարտության ուժային լուծման որեւէ փորձ աղետալի կլինի»

Եվրոմիություն-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովը «առանց որեւէ բացառության աջակցում է 2009 թ. Լ'Աքվիլայում եւ 2010-ին Մուսկոկայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարություններում ներկայացված սկզբունքներին...»՝ աջակցելով նաեւ 2011-ի դովիլյան հայտարարությանը:

Նոյեմբերի 2-3-ին Երեւանում ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի 12-րդ նիստում ընդունվել են հայտարարություն եւ հանձնարարականներ, որոնցում, ըստ Հայաստանում ԵՄ պատվիրակության պաշտոնական հաղորդագրության, առանձնակի համաձայնություն է հայտնվում ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ 2010-ի հուլիսի 17-ի հայտարարության մեջ արվող ընդգծմանը առ այն, որ «Հիմնարար սկզբունքներից որեւէ մեկը մյուսներից առանձնացնելու յուրաքանչյուր փորձ անհնար կդարձնի հավասարակշռված լուծման հասնելը»:

Նույն փաստաթղթով հանձնաժողովը ողջունում է ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն իր աջակցությունը մեծացնելու ԵՄ ցանկությունը, շեշտելով, որ «հակամարտության ուժային լուծման որեւէ փորձ աղետալի կլինի»:

Փաստաթղթի վերջին կետն անդրադառնում է հայ-թուրքական հարաբերություններին, կրկին առանձնահատուկ շեշտադրմամբ, որ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններն առանձին գործընթացներ են ու պետք է առաջ գնան իրենց տրամաբանական հիմքով, թեեւ «երկու գործընթացներից մեկում առաջընթացը պոտենցիալ առումով կարող է դրական հետեւանքներ ունենալ ողջ տարածաշրջանի համար»:

ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովը մոտ 20 կետերով ողջունում է եվրոպական ինտեգրման ուղղությամբ արվող քայլերը, միեւնույն ժամանակ ափսոսանք հայտնելով, որ Հայաստանում ներքաղաքական մթնոլորտի նորմալացումը ավարտին չհասավ ի դեմս իշխանություն-ընդդիմություն երկխոսության, ընդգծմամբ, որ երկխոսությունն անհրաժեշտություն է:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՄԱԿ-ի ոչ մշտական անդամ Ադրբեջանը գուցե ավելի լուրջ լինի, բայց դժվար...

Հայաստանի կողմից Թուրքիային տրամադրված մարդասիրական օգնության կապակցությամբ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հայտարարել էր, որ դա չի կարող դրական ազդեցություն ունենալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա:

«Panorama.am»-ի փոխանցմամբ, ՀՀԿ խմբակցության անդամ Հովհաննես Սահակյանի՝ այս առնչությամբ հարցին Ազգային ժողովում արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** պատասխանել է. «Հայաստանն իր օգնության ձեռքը մեկնեց Թուրքիային, եւ չեմ կարծում, որ այդ կարգի հայտարարությունները կարող են դրական ազդեցություն ունենալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում»,- արձագանքեց նախարարը:

Նալբանդյանը նշել է, որ, փաստորեն, թուրքական կողմը շարունակում է ապակառուցողական մոտեցումը, որ դրսեւորել է Ցյուրիխից հետո: Իսկ թե որն է հայ-թուրքական հարցում ԱՄՆ-ի լավատեսության հիմքը, Հայաստանի ԱԳ նախարարը արձագանքել է. «Դիվանագիտության մեջ պետք է լավատես լինես: Եթե այդպիսին չես, ապա դիվանագետ չես», ընդգծելով, որ անկախ Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշումից, Հայաստանն այն կարծիքին է, որ հարաբերությունները պետք է կարգավորել ու այդ ուղղությամբ պետք է շարունակել ջանքերը:

Խոսելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ադրբեջանի ոչ մշտական անդամ ընտրվելու մասին՝ Նալբանդյանը կարծիք է հայտնել, թե այդ անդամակցությանը պետք չէ այդքան արձագանքել:

«Հայաստանը պատրաստ է շարունակել նույն ոգով, ու եթե Ադրբեջանը, դառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, միգուցե ավելի լուրջ ու ավելի կառուցողական մոտեցումներ ցուցաբերի՝ տեսնենք: Սակայն կասկածելի է... Արդյոք Ադրբեջանը հետ կկանգնի՞ պատերազմ հրահրելու կոչերից, ռազմատենչ հայտարարություններից, ռասայական հայտարարություններից: Խիստ կասկածելի է», ասել է ԱԳ նախարարը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Սեյրան Օհանյան. Բանակում մահվան յուրաքանչյուր դեպք մեզ համար ողբերգություն է

*1-ին էջից*

Դիտարկմանը, թե Մոզրովյանի մահը չի՞ նշանակում, որ երբեմն ոչ առողջ զինվորներին են զորակոչում բանակ, Օհանյանը հավելել է. «Գոյություն ունի բժշկական հանրապետական հանձնաժողով, որի աշխատանքը շատ խիստ վերահսկողության տակ է: Բազմաթիվ անգամ իրականացրել ենք համատեղ միջոցառումներ: Եթե բացթողումներ արձանագրել ենք, համապատասխան քայլեր ենք կատարել: Եռաստիճան բուժզննում են անցնում մեր զինծառայողները»: Նա հավաստիացրեց, որ բանակում մահվան դեպքերի բացահայտման վերաբերյալ տարվում են լուրջ աշխատանքներ: Նախարարի խոսքերով, նախորդ տարիների համեմատությամբ զինված ուժերում մահացության դեպքերի նվազում է արձանագրվել: «Սակայն յուրաքանչյուր մեկ դեպք մեզ համար ողբերգություն է, անընդունելի»:

Նախարարը կրկին շեշտել է, որ բանակը բաց է հասարակության առաջ: «Ովքեր ուզում են մեզ օգնել, մենք իրենց ընդառաջում ենք, ովքեր ուզում են այն իրավիճակում, որ մերթընդմերթ լինում է բանակում, աջակցել, մենք իրենց հետ աշխատում ենք: Մենք աշխատում ենք յուրաքանչյուր հասարակական կազմակերպության հետ օրինական դաշտում: Բայց, եթե լինում են հերյուրանքներ, անձնական վիրավորանքներ, հակաօրինական քայլեր, ապա փորձում ենք դրանց իրավական արձագանք տալ օրինական դաշտում»: Սեյրան Օհանյանը նշել է, որ կան անձինք, ովքեր փորձում են շահարկել առկա վիճակն ու բանակի հասցեին վարկաբեկիչ տեղեկություններ տարածել: Նախարարը անուններ չի տվել, սակայն վստահեցրել է, որ այդ գործողություններին արձագանքելու է: «Իսկ թե ի՞նչ մեթոդներով»՝ պատասխանել է. «Կարծում եք անօրինական քայլերի՞ եմ գնալու»:

# BlackBerry 9700 սմարթֆոնը կարելի է ձեռք բերել Orange-ում արդեն նաեւ առանց BIS ծառայության




Orange-ի խանութներում կարելի է ձեռք բերել BlackBerry 9700 սմարթֆոնն արդեն ոչ միայն BlackBerry Ինտերնետ Ծառայության (BIS) հետ միասին, այլ նաեւ առանց դրա:

Սմարթֆոնն այսօրվանից հասանելի է 210,000 դրամով նախկին 230,000-ի փոխարեն:



# Ինչո՞ւ են հրաժարականներ տալիս կամ պահանջում

## *Գլխավոր հարցն այդպես էլ մնում է անպատասխան*

**Հայաստանի ներքաղաքական կյանքում մեկ շաբաթվա ընթացքում կատարվող փոփոխություններն անհասկանալի են հասարակության լայն շերտերի համար: Պաշտոնանկ են լինում քաղաքական գործիչներ, որոնցից մի մասին ժողովուրդն է ընտրել, սակայն ոչ ոք չի բացատրում պաշտոնանկությունների իրական պատճառները: Մինչդեռ հասարակությունը պետք է իմանա, թե ինչ է կատարվում իր երկրում, ինչու է հանրապետության նախագահը բարձր պաշտոններից ազատում անձանց առանց որեւէ հիմնավոր բացատրության: Ինչո՞ւ է իր ընտրած կուսակցությունը խորհրդի նիստում որոշումներ կայացնում, սակայն դրանք չեն հրապարակվում: Մինչդեռ լռությունը կամ անտեղյակությունը ծնում է բազմաթիվ ենթադրություններ, գուցեներ, երեւակայական տեսակետներ, որոնց պատճառով հասարակությունն ընկնում է ենթադրությունների գիրկը: Իսկ ենթադրությունները տարբեր են: Հրաժարականները ՀՀԿ-ԲՀԿ հակամարտության արդյո՞ւնք են, կամ կա՞ն արդյոք դրանք ընդհանրապես, թե՞ ոչ, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին լիկվիդացնելու փո՞րձ են, խորհրդարանական ընտրությունների սեմին վերադասավորո՞ւմ, թե էլի մեկ ուրիշ բան, որից հասարակությունն անտեղյակ է: Փաստորեն ձեւավորվում է մի իրավիճակ, երբ երկրի ներսում կատարվում են լուրջ փոփոխություններ, բայց երկրի փաստացի տերը՝ ժողովուրդը, «բեխաբար է»: Յուրաքանչյուրն իր ենթադրությունն ու վերլուծությունն ունի, սակայն գլխավոր հարցը՝ ինչո՞ւ են հրաժարական տալիս կամ պահանջում, մնում է անպատասխան:**

**Երեկ մամուլի ակումբներում քաղաքական, հասարակական տարբեր գործիչներ տեսակետներ էին ներկայացնում, թե ինչով է պայմանավորված հրաժարականների շքերթը, որը գուցե շարունակվի:**

**«Ինչո՞ւ հենց հիմա», «ինչո՞ւ հենց այս պահին» հարցերին նրանցից ոչ ոք հստակ պատասխան չտվեց:**

**ՀՀԿ-ական Ռաֆիկ Պետրոսյանի մեկնաբանությամբ՝ կադրային փոփոխությունները պայմանավորված են մեկնարկած նախընտրական գործընթացներով: «Որքան մոտենան ընտրությունները, այնքան հավանական են կադրային փոփոխությունները»:**



**«Ժառանգության» պատգամավոր Լարիսա Ալավերդյանը ներքաղաքական դաշտում կատարվողն անվանում է նյարդերի պատերազմ: Նա վստահ է, որ վերջին օրերի հրաժարականների հիմքում մեծ բիզնեսի ռեսուրսները կորցնելու վտանգն է: «Բիզնեսի համար թթվածինը փակելու վտանգն է: Այստեղ «ով ում մարդն է» տրամաբանությունն է գործում: Սա մեր քաղաքական էլիտայի հետամնացությունն է վկայում»:**

**Քաղաքագետների միության նախագահ Համայակ Հովհաննիսյանի գնահատմամբ՝ քաղաքականությունը Հայաստանում միջկլանային պայքար է, որի գործիքն ինտրիգն է: «Պաշտոնանկություններ դեռ կլինեն, քանի որ մթնոլորտը թանձրանում է, եւ բոլորը դավադիրներ են փնտրում: Այս վարչակարգն ինքն իրեն մխելու գործընթացի մեջ է հայտնվել, եւ այդ ընթացքը շարունակվելու է»:**

**Սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանի եւ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի հրաժարականների միջեւ ներքին կապ է տեսնում: Նրա խոսքով՝ իշխանական թեւում կա մի հատված, որ դեմ է գործող իշխանություններին:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Աղիֆային մանրէներ եւ ստաֆիլակոկի բակտերիաներ այծի կաթում

**Ինչպես տեղեկացանք գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունից, ծառայության ուսումնասիրությամբ շուկայում իրացվող Armfood ապրանքանիշի այծի կաթում հայտնաբերվել են աղիֆային ցուպիկի խմբի մանրէներ եւ ստաֆիլակոկի բակտերիաներ: Տեղեկացվում է, որ տրվել է տվյալ ապրանքանիշի կաթնամթերքի իրացման կասեցման կարգադրագիր: Մինչ ամբողջ խմբաքանակը շուկայից դուրս բերելը, ծառայությունը դիմում է ազգաբնակչությանը՝ զերծ մնալ վերոնշյալ ապրանքանիշի կաթնամթերք ձեռք բերելուց:**

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Թռչկանը փրկվեց

## Ջրվեժը կհամարվի հատուկ պահպանվող տարածք

Վարչապետ Տիգրան Սարգսյանը կառավարության նիստի օրակարգում երեկ ընդգրկեց Թռչկանի ջրվեժի հարցը: **Տիգրան Սարգսյանը** ներկաներին հիշեցրեց բնապահպանների ահազանգի մասին, որ ՀԷԿ-ի կառուցման համար կառավարության որոշումը վտանգում է ջրվեժի ապագան: Սարգսյանը շեշտեց` նախագահի հանձնարարականով բնապահպանության նախարարությունն ուսումնասիրել է խնդիրը եւ որոշումներ կայացրել, համաձայն որոնց ռիսկերը չեզոքացվել են: «Սակայն բնապահպանները բարձրացրին մեկ այլ հարց. որպեսզի ապագայում ջրվեժին վտանգ չսպառնա, նրանք առաջարկում են հստակ կարգավիճակ տալ այդ հողատարածքին: Այդ տարածքում պետության կողմից երաշխավորված կլինի, որ ապագայում էլ որեւէ վտանգ չի սպառնա ջրվեժին, եւ այն ջրային ռեսուրսները, որոնք առկա են, այլ նպատակով չօգտագործվեն», ասաց վարչապետը` առաջարկելով որոշում սահմանել, որի համաձայն ջրվեժի տարածքը կօգտվի հատուկ պահպանվող տարածքի ռեժիմից:




Սա արդեն երկրորդ դեպքն է, երբ բնապահպանների, ակտիվիստների եւ մամուլի պայքարով բնապահպանական տարածք է փրկվում: Մի քանի ամիս առաջ հասարակական երկամյա բողոքի արդյունքում կառավարությունն անվավեր ճանաչեց 2007-ին ընդունած «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում «Գիլան» պետական արգելավայր ստեղծելու եւ այդ արգելավայրը մինչեւ 60 տարի վարձակալության, մինչեւ 10 տարի գյուղատնտեսական գործունեության եւ կառուցապատման իրավունքով «Հովազաձոր» ՍՊԸ-ին տրամադրելու որոշումները:

Ցավալի է, որ երկու դեպքում էլ հանուն բնության պահպանության որեւէ քայլ չձեռնարկեց բնապահպանության նախարարությունը: «Խոսրովի անտառ» արգելոցի պարագայում Արամ Հարությունյանը շեշտում էր, որ փաստաթղթում իր ստորագրությունը չկա, եւ մասնակցելով քննարկումներին` խոստումներ էր տալիս, որոնք այդպես էլ իրականություն չէին դառնում: Թռչկանի ջրվեժի պարագայում Հարությունյանը այլընտրանք էր առաջարկում, որ ջրվեժի հարեւանությամբ ՀԷԿ-ի կառուցման շինարարությունը չդադարեցվի: Նա առաջարկում էր ջրվեժի ջուրը օգտագործել միայն, երբ ջրի արագությունը կգերազանցի 400-500 լիտր վայրկյան արագությունը: Նա նաեւ առաջարկում էր, որ ամռան ամիսներին ՀԷԿ-ը չգործի: Թե ինչպես պետք է նախարարությունը հետեւեր, որ միայն սահմանված նիշից հետո ջրվեժի ջուրն օգտագործվեր, նախարարը չէր մանրամասնում:

Այս պահին դժվարությամբ եմ հիշում մի դեպք, երբ գոնե վերջին 2 տարվա ընթացքում նախարարը դեմ գնար ինչ-որ օլիգարխի շահերին եւ պաշտպաներ բնությունն ու բնության շահերը` մինչդեռ նրա գործառույթը կառավարությունում հենց դա է: Դա չեղավ ոչ այն ժամանակ, երբ Արգիճի վտակի վրա ՀԷԿ էին կառուցում եւ Մարտունու շրջանի շուրջ 30.000 բնակիչ պետք է մնար առանց ոռոգման ջրի, իսկ Սեւանը կորցներ կենսաբազմազանությունը, դա չեղավ այն ժամանակ, երբ որոշվեց Հրազդանում երկաթի, Տաթեւի երկաթի, Կապանում ուրանի եւ այլ հանքերի շահագործումը: Դժվար է հիշել մեկ դեպք, երբ բնապահպանական խնդիրների մասին առաջինը ահազանգել կամ կառավարության նիստերի ժամանակ բարձրացրել է նախարարը: Այս դեպքում, ինչի՞ համար է բնապահպանության նախարարը, եթե պետք է նախագահի կամ վարչապետի հանձնարարականներից հետո միայն ուսումնասիրվեն ռիսկերը ու ընդունված որոշումները չեղյալ համարվեն:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# 18 մլրդ դրամը հավասար կբաժանվի 100 հազար պետական ծառայողներին

## Նրանց առողջապահական, կրթական, բնակարանային եւ հանգստի հարցերի լուծման համար

Պետական բյուջեի նախագծով նախատեսվում է շուրջ 18 մլրդ դրամ հատկացնել պետական ծառայողների համար սոցիալական ապահովության փաթեթին: Երեկ կառավարության նիստում վարչապետ Տիգրան Սարգսյանը առաջարկեց ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանին` մանրամասներ ներկայացնել այդ փաթեթի մասին:

Ըստ ֆինանսների նախարարի` փաթեթը յուրաքանչյուր աշխատակցի համար անկանխիկ գումար է: Քաղծառայողը կարող է չորս ուղղություններով օգտագործել այդ փաթեթը, իսկ նրա համար համապատասխան վճարումներ կկատարի համապատասխան հիմնարկի ֆինանսական կամ հաշվապահական վարչությունը: Եթե աշխատակիցը գնում է բժշկական ապահովագրություն, ապա դրանով նա լուծում է իր եւ իր ընտանիքի բժշկական անվտանգության հարցերը: Երկրորդ ուղղությունը, որն առաջարկվում է փաթեթով, հիփոթեքային վարկերի համար տոկոսադրույքների վճարումն է: Ընդ որում, հիփոթեքային վարկերը վերաբերում են ոչ միայն բնակարանի ձեռքբերմանը, այլեւ վերանորոգման ընթացիկ վարկերին: Երրորդ ուղղությունը կրթությունն է, չորրորդը` հանգիստը Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում: Վաչե Գաբրիելյանի հավաստմամբ, բոլոր դեպքերում մշակված են մեխանիզմներ, որոնք նվազագույնի կհասցնեն բյուրոկրատիան: «Մասնավորապես, նախարարությունում կամ հիմնարկությունում որեւէ մեկը չի որոշի` արժե այդ վճարումը կատարել, թե ոչ», ասաց նա, ավելացնելով, որ կրթության ոլորտում նշված կլինեն բոլոր այն հաստատությունները, որոնք, փաթեթի համաձայն, հաստատել է կրթության նախարարությունությունը, էկոնոմիկայի նախարարությունը կհաստատի ծրագրի համապատասխան բոլոր այն հանգստյան տների, հյուրանոցների եւ առողջարանների ցանկը, որոնցից կօգտվեն քաղծառայողները, բժշկական ապահովագրությունից կօգտվեն Կենտրոնական բանկի կողմից արտոնագրված բժշկական ապահովագրություն տրվող ընկերությունների ծառայություններից: Չորրորդ ուղղության համապատասխան` եթե բանկը հաստատի, որ քաղծառայողի վարկը համապատասխանում է փաթեթով նախատեսված եւ Ազգային հիփոթեքային ընկերության ստանդարտներին, ապա անմիջապես վարկի տոկոսները կվճարվեն:

«Փաթեթն առնվազն կտարածվի պետական համակարգի 100 հազար աշխատակիցների վրա», եզրափակեց ֆինանսների նախարարը: Դրան վարչապետը հավելեց, որ այդ 18 մլրդ դրամը հավասար չափով հասնում է շուրջ 100 հազար պետական ծառայողների` անկախ նրանից, թե նրանք ինչ պաշտոնական դիրք են զբաղեցնում եւ ինչ աշխատավարձ են ստանում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Ստեղծվեց «Հայկական միրգ» ԲԲԸ-ն

**100 տոկոս պետական մասնակցությամբ «Հայկական միրգ» բաց բաժնետիրական ընկերությունը երեկ ստեղծվեց կառավարության որոշմամբ, որի հիմնական խնդիրներն են` աջակցել գյուղական աղքատության նվազեցմանը, փոքրածավալ արտադրողների կարողությունների եւ եկամտի ավելացմանը` դրանք կապելով հայկական պտղի եւ ընկուզեղենի արտադրությանը, հայկական մրգի համբավի ու բարի անվան ներմուծմանը տարածաշրջանային եւ միջազգային շուկա: Ինչպես այս մասին նշեց վարչապետ Տիգրան Սարգսյանը, այս ծրագրի շնորհիվ ակնկալվում է, որ արտադրողականությունն էապես կաճի: Նրա ներկայացմամբ, Հայաստանում կիրառվելու են նոր տեխնոլոգիաներ, որոնց արդյունքում գիտելիքներ կհաղորդվեն գյուղացիներին, թե ինչպես մեկ հեկտարից ավելի մեծ արդյունք ստանալ:**

Ա. Մ.

# Մետրոյով դեպի օդանավակայան

## «Չարբախը» կկապվի «Զվարթնոցին»

**Կառավարության նիստում երեկ հաստատվեց «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հարակից տարածքում միջազգային լոգիստիկ կենտրոնի եւ տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագիրը: Ներկայացնելով այն` տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը հայտնեց, որ սա ազատ տնտեսական գոտու ստեղծման բաղադրիչներից է, ապահովելու է մայրուղիներից եւ Երեւան քաղաքից դեպի օդանավակայան ուղեւորաբեռնափոխադրումների իրականացումը` ավտոմոբիլային նոր մայրուղու եւ երկաթգծի կառուցման միջոցով: Նախարարի տեղեկացմամբ, լոգիստիկ կենտրոնի շինարարությունը տեւելու է երեք տարի, արժեքը լինելու է շուրջ 25 մլն եվրո, որն ապահովվելու է պետություն-մասնավոր համագործակցությամբ:**

**Մանուկ Վարդանյանի ներկայացմամբ` երկաթուղային նոր գծի կառուցումը թույլ կտա կապ հաստատել «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորատար տերմինալի եւ «Չարբախ» մետրոպոլիտենի կայարանի միջեւ, իսկ բեռնային համալիրը արագընթաց գնացքի միջոցով կկապվի Կարմիր բլուր կայարանի հետ: Շինարարությունը կարժենա 5 մլն դոլար:**

**Դեպի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան նոր մայրուղին նախատեսվում է իրականացնել երկու առանձնացված եռագիծ տարբերակով: Մայրուղին ունենալու է 3,5 կմ երկարություն, շրջանցելու է Փարաքար եւ Արգավանդ բնակավայրերը եւ միանալու ապագայում կառուցվելիք Իսակովի պողոտա-Շիրակի փողոց տեղամասին: Նախնական հաշվարկների համաձայն` կառույցը կարժենա շուրջ 45 մլն դոլար` առանց օտարման գոտու համար նախատեսվող գումարների: Նշված գումարից 25 մլն դոլարը նախատեսված է 2x3 շերտանի ավտոճանապարհի եւ էստակադայի կառուցման համար, իսկ 20 մլն դոլար` տրանսպորտային հանգույցի, ինժեներական կոմունիկացիաների եւ լուսավորման սյուների համար:**

Ա. Մ.

# Բացի մեքենաներից նաեւ այլ շահումներ

**Փոփոխելով իր ավելի վաղ ընդունած որոշումներից մեկը` կառավարությունը երեկ որոշեց հարկային վարչարարությանն օժանդակելու նպատակով անցկացվող վիճակահանության ժամանակ, բացի 15 ավտոմեքենայից, որպես պարգեւավճար տրամադրել նաեւ այլ գույք: Ըստ պետեկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի` կտրոնի առաջին եւ վերջին նիշից սկսած 4 թվերի համընկնելու դեպքում եւս կնախատեսվեն շահումներ` համակարգիչ, ինտերնետ քարտ եւ այլն: Նա նաեւ տեղեկացրեց, որ այդ շահումները կտրամադրեն ՀԴՄ կտրոնին իրենց գովազդը տեղադրած կազմակերպությունները:**

**Այդուհանդերձ, ակնհայտ է, որ այս միջոցը եւս ոչ մի կերպ չի խթանի հասարակության ակտիվությունը այս հարցում, ինչի պատճառների մասին բազմիցս գրել ենք մեր թերթում: Միակ արդյունավետ տարբերակը բոնուսների տրամադրումն էր, որը, սակայն, չկազմակերպվեց ճիշտ ձեւով եւ վերացվեց:**

Ա. Մ.

# Հոգեկան խանգարումների դեպքերը շատացել են` 44-45.000

**Հոգեկան խանգարումները նույն տեսակի խանգարումներ են, ինչպես մնացած բոլոր տիպի հիվանդությունները, եւ բուժելի են, եթե վաղ շրջանում են հայտնաբերվում ու բուժվում: Աշխարհում հոգեկան խանգարումների թիվը տարեցտարի ավելանում է, եւ դրանց թիվը հասել է 450 միլիոնի, որոնք տառապում են այդ հիվանդությամբ: Նաեւ աշխարհի բնակչության ամբողջ թվից յուրաքանչյուր չորսից մեկը իր կյանքի ընթացքում այս կամ այն ձեւի առնչվում է որեւէ խանգարման: Ինչպես «Ազգի» հարցերին պատասխանեց ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության պետ, բժշկական գիտ. թեկնածու, հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանը, «ապացուցված է, որ ինքնասպանություն գործողների 60 տոկոսի մոտ առկա է դեպրեսիվ խանգարում, իսկ ինքնասպանությունները այսօր ամենամեծ չարիքն են»: Հոգեկան խանգարումների իրական աճ կա` կապված կյանքի նոր իրավիճակների ու տեխնիկական զարգացման հետ: Արվամոլության, ինտերնետային կախվածության, միգրացիաների տարբեր զարգացումներ, սթրեսներ եւ այլն, դրանք բոլորը նպաստավոր հիմք են ստեղծում այս կամ այլ հոգեկան խանգարումների համար: Այսօր Հայաստանում հաշվառված հոգեկան խանգարումներով տառապողների թիվը 44-45.000 է: Մասնագետն ասաց, որ հոգեկան խանգարումներով հիվանդանում են բոլորը` անկախ տարիքից, սեռից, սոցիալական վիճակից: Բոլոր խանգարումների մեջ ժառանգականությունը առկա է եւ նախատրամադրությունը դեր ունի: Կանայք ավելի շատ են տառապում դեպրեսիաներով, հատկապես էմոցիոնալ ոլորտի ներկայացուցիչները, իսկ օրգանական կամ մտածողության խանգարումներով տառապում են տղամարդիկ: Հոգեկան խանգարումներ ստանալու ամենավտանգավոր տարիք են համարվում 30-35 տարեկանը եւ ծերունական ու նախածերունական տարիքը: Իսկ ծխախոտից, ալկոհոլից, թմրամիջոցից, ինտերնետից կախվածությունը նույնպես բերում է դեպրեսիայի, որից հետո աստիճանաբար սկսվում են հոգեկան խանգարումները: Եթե մարդը ունի ինչ-ինչ հոգեբանական խնդիրներ, հեշտությամբ կընկնի աղանդավորների ցանցը: Ուստի առաջին իսկ նման երեւույթներ ի հայտ գալուց պետք է դիմել բժշկի, այլ ոչ թե ավանդական, հեքիմներին եւ այլոց: Հասարակության վերաբերմունքը փոխվել է, այժմ նման հիվանդներին կարելի է բուժել:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԶԳ

## Հասարակագիտական

# Քաոսից կարգավորվածություն

Այսօր հաճախ է խոսվում այս կամ այն համակարգում գոյություն ունեցող թերությունների, անարդյունավետության, եւ անհոգատար վերաբերմունքի մասին դա լինի հասարակության, տնտեսության, կրթության, առողջապահության եւ կամ որեւէ բնագավառ որտեղ կառավարման, էֆեկտիվության հետզհետե նվազման հետեւանքով մեծանում է այս կամ այն համակարգի անկարգության աստիճանը` (էնտրոպիան): Ըստ բնության հիմնական օրենքի` Թերմոդինամիկայի (ԹԴ) 2-րդ օրենքի այդպիսի համակարգերը որտեղ էնտրոպիան-քաոսը-անկարգությունը անընդհատ մեծանում է դատապարտված են ոչնչացման: Եթե միջոցներ չձեռնարկվի համակարգին բերելու իր ստացիոնարության վիճակին, ապա համակարգը կձգտի հավասարակշռության, որը նշանակում է մահ, ինչպես հավասարակշռված բջիջը դա մահացած բջիջն է, երբ էներգիայի հոսք այլեւս չկա: Խոսքը վերաբերում է բաց համակարգերին, որոնք շրջապատի հետ էներգիա են փոխանակում: Ուստի որպեսզի համակարգը չոչնչանա եւ գոյատեւի պետք է շրջապատից էներգիա` բացասական էնտրոպիա ստանա, որպեսզի համակարգի ներսում անխուսափելիորեն աճող էնտրոպիան փոխհատուցվի: Սրա ամենալավ օրինակներն են այս կամ այն տնտեսության սնանկացումից փրկումը ներմուծվող ներդրման միջոցով, կամ հիվանդի առողջական վիճակի բարելավումը, ճշգրիտ ախտորոշման եւ համապատասխան դեղանյութի ընդունման միջոցով, որոնք նշված համակարգերը կարող են ստանալ միջավայրից: Ըստ ԹԴ-ի երկրորդ օրենքի բնությունը լինելով բաց համակարգ, որը կարող է իր շրջապատի հետ շփվել եւ էներգիա փոխանակել, հանդիսանում է ինքնակարգավորվող համակարգ, որը կարող է մարել այն հարվածները կամ կատակլիզմները, որոնք ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում բնության մեջ (երկրաշարժ, հրաբուխ, ջրհեղեղ, փոթորիկ) եւ նորից անցնել կարգավորված վիճակի, որին անվանենք ըստ երկրորդ օրենքի` ստացիոնար վիճակ: Այդպիսին է նաեւ կենդանական աշխարհում, մասնավորապես մարդու օրգանիզմում, որտեղ էնտրոպիայի` քաոսի աճը, արտահայտված է հիվանդության առաջացմամբ, որին անվանենք քաոտիկ վիճակ եւ երբ օրգանիզմը կարողանում է հաղթահարել այն, ապա անցնում է ստացիոնար` ինքնակարգավորված վիճակի, որին անվանենք առողջ վիճակ: Իսկ եթե չկարողանա հաղթահարել այն, քաոսը հետզհետե օրգանիզմում կմեծանա եւ օրգանիզմը կմահանա: Այդ իսկ պատճառով հաճախ ասում են, կյանքը պայքար է էնտրոպիայի դեմ: Դրա համար մարդիկ հիվանդանալիս դիմում են բժշկի, որը, ախտորոշելով հիվանդին, ճշգրիտ լրատվություն ստանալով հիվանդ օրգանի վերաբերյալ (դիագնոզ) համապատասխան դեղ է նշանակում եւ հիվանդը ընդունելով այն ապաքինվում եւ օրգանիզմը բերում ստացիոնար` կարգավորված վիճակի: Դրանից հետո դեղաընդունումը դադարեցվում է, քանի որ օրգանիզմը անցնում է ինքնակարգավորման էտապ: Նմանատիպ մոտեցումը ըստ երկրորդ օրենքի տարածվում է երկրագնդի վրա մարդու կողմից ստեղծած յուրաքանչյուր համակարգի նկատմամբ, դա լինի շուկա, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, հասարակություն կամ պետություն:

Սակայն նշված համակարգերը որպեսզի գործեն եւ երկար գոյատեւեն, անհրաժեշտ է որ ճշգրիտ հաշվել թե տվյալ համակարգը իր գործունեության ընթացքում իր զարգացման շնորհիվ էներգիան ստանում է իր ներքին ռեսուրսների եւ կամ շրջապատի ավելցուկային էներգիայի հաշվի՞ն, թե՞ այն վերցնում է իր շրջապատում գտնվող մի այլ համակարգից, որը էներգիայի կարիք ունի: Այսպես օրինակ համակարգեր, որոնք հարստանում են (էներգիա են վերցնում) պետության հաշվին իսկ համարժեքը չեն վերադարձնում, ապա այդ պետությունը վաղ թե ուշ կոչնչանա, ուստի կառավարումը պետք է կազմակերպվի այնպես, որ համակարգերում ինչպես նաեւ պետություններում էնտրոպիան` քաոսը հետզհետե չմեծանա եւ այն ձգտի մինիմումի կամ մնա հաստատուն: Հակառակ դեպքում համակարգերում, պետություններում, էնտրոպիայի մեծացումը, որը անխուսափելի պրոցես է, համակարգին կտանի ոչնչացման, եւ կարող է ազդել նաեւ երկրագնդի ստացիոնար վիճակի վրա (ատոմային կամ ֆրեոնային եւ այլ նյութերի արտադրության ոչ ճիշտ օգտագործում, պարբերական ճգնաժամեր):

Այսօր ամերիկյան գյուղատնտեսությունը գյուղատնտեսական մթերքների սղության աճը կանխելու համար, հենվելով երկրորդ օրենքի վրա տարբեր մասնագիտության գիտնականների օգնությամբ ստեղծել են Դելֆիի գյուղատնտեսական մոդելը, որի օգնությամբ հաշվի առնելով գյուղատնտեսության համար նույնիսկ եղանակային անբարենպաստ տարիները 10 տարվա կտրվածքով ապահովում են գյուղատնտեսական մթերքների 50 տոկոսը, իսկ 5 տարվա կտրվածքով ապահովում են բերքի 70 տոկոսը, ինչպես տեսնում ենք երկրորդ օրենքը բազմաբնույթ է:

Քանի որ բնության կողմից հաշվի չի առնված մարդու կողմից գիտության զարգացման զուգընթաց բնությանը հասցվող վնասները, որոնք այսօր իրենց զգացնել են տալիս` էկոլոգիական խնդիրներ, ջերմոցային էֆեկտ, անտառների հատում, օզոնի շերտի հաստության նվազում, հասարակության բեւեռացում, տնտեսական ճգնաժամեր, բնակչության թվի ավելացում եւ շատ ուրիշներ, որոնք աստիճանաբար բերեցին եւ բերում են երկրագնդի վրա քաոսի մեծացման, որն էլ կբերի այս կամ այն համակարգի ոչնչացման: Սրա վառ օրինակներից մեկը հասարակության բեւեռացման, ազգամիջյան խնդիրների չլուծման, կոռուպցիայի եւ կաշառակերության մեծացման հետեւանքով Խորհրդային հասարակարգի քայքայումն էր: Այս կարգի երեւույթները այսօր իրենց բացասական ազդեցությամբ խոր հետք են թողնում ինչպես ողջ երկրագնդի, այնպես էլ առանձին երկրների վրա: Ուստի այսօր որոշ զարգացած երկրներ ղեկավարվելով ԹԴ-ի II օրենքով անում են ամեն ինչ, որպեսզի իրենց երկրում էնտրոպիան չմեծանա, որը գործող համակարգում անխուսափելի է եւ այն պահեն հաստատուն ինչը նշանակում է համակարգի օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ) չթողնել փոքրանա: Այդ նպատակով նրանք ակտիվորեն պայքարում են կոռուպցիայի, կաշառակերության, նյութական միջոցների վատնման, հասարակության բեւեռացման կանխման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման եւ առողջական վիճակի բարելավման համար, քանի որ միայն այդպիսի միջոցներով է, որ հնարավոր է աճող քաոսը կանխել:

Եվ քանի, որ էնտրոպիան ունի և՛ էներգետիկ, և՛ լրատվական (ինֆորմացիոն) բնույթ, ուստի ըստ երկրորդ օրենքի մեծացնելով տեղեկատվության քանակը կարելի է փոքրացնել համակարգում անորոշության աստիճանի մեծացումը եւ այն կլինի միայն այն դեպքում, երբ լրատվությունը լինի ճշգրիտ եւ առատ, ինչպես մարդու օրգանիզմում:

Մարդու առողջության գրավականը նրա գենետիկական ծածկագրից (կոդ) եկող տեղեկատվությունն է: Կիսաճշմարիտ կամ խեղաթյուրված լրատվության դեպքում օրգանիզմում տեղի է ունենում մուտացիա (ուռուցք, խոց եւ այլն), նման այն բանի, երբ երկու պետությունների միջեւ պատերազմ հրահրելիս գործի են դնում ապատեղեկատվությունը-կեղծ լրատվությունը: Ելնելով վերը նշվածից այսօր մեր հասարակության եւ պետության որոշ ոլորտներում` արդարադատություն, առողջապահություն, կրթություն, արտագաղթը հսկող կազմակերպություն նկատվում է կառավարման համակարգի էնտրոպիայի աճ, որը մեծանալիս անպայման կբերի համակարգի փլուզման: Ուստի, դրա դեմն առնելու համար նախ եւ առաջ պետք է սկսել այդ համակարգերում աշխատող պատասխանատու կադրերից, ինչի վրա վերջերս հեռուստատեսությամբ ելույթ ունենալիս ուշադրություն հրավիրեց ՀՀ նախագահը:

Որպեսզի համակարգում քաոսը չաճի, կադրերը պետք է լինեն առողջ եւ բանիմաց եւ առատ ինֆորմացված: Եվ քանի որ միտքը կարող է շարունակել իր վեհ գործունեությունը միայն նյութական հիմքի վրա ուստի առողջ մարմնում պետք է լինի առողջ հոգի: Երբ ղեկավարը առողջ չէ այլ հիվանդ, ապա նրա օրգանիզմը նորմալ վիճակից դուրս է` աննորմալ վիճակ եւ եթե ունի նաեւ հոգեկան խաթարված վիճակ, կոռումպացված է եւ կաշառակեր, ուստի նրա գործունեությունն էլ պետք է լինի աննորմալ, քանի որ հանուն կաշառքի նա կարող է դավաճանել նաեւ իր երկրին, դա մեր կարծիքն է, եւ եթե ամենօրյա ճշգրիտ լրատվությունն էլ չի տիրապետում, ուստի իր անգրագետ գործունեությամբ կմեծացնի համակարգի էնտրոպիան-անորոշության աստիճանը, որն էլ կբերի համակարգի ոչնչացմանը:

Իսկ երբ տվյալ կադրը հմուտ է, տիրապետում է ճշգրիտ տեղեկատվության եւ հետզհետե ավելացնում է այն, նյութական միջոցների վատնում թույլ չի տալիս, կատարում է ճշգրիտ որոշումներ ապա փոքրացնում է համակարգում անխուսափելիորեն աճող էնտրոպիան եւ մեծացնում համակարգի ՕԳԳ-ն փրկում համակարգին կործանումից, ինչպես հմուտ բժիշկը փրկում է մահացող հիվանդին:

ԹԴ-ի երկրորդ օրենքի սկզբունքների կիրառումը այսօր խիստ անհրաժեշտ է օգտագործել մեր հանրապետության տնտեսության եւ հասարակության բոլոր ոլորտներում, որի շնորհիվ նշված համակարգերը զերծ կմնան տնտեսական եւ հասարակական ցնցումներից, որից կշահի մեր պետությունը եւ ժողովուրդը:

**Փ. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
**ԵՊՀ-ի դասախոս` դոցենտ**

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# Սեռավարակներն ու սթրեսը` անպտղության հիմք

**Հայաստանում անպտղության տոկոսը հասել է 18-ի, որը մտահոգվելու առիթ է տալիս: Հետազոտությունները ցույց են տվել, որ անպտղությունը` չբերությունը, լայն տարածում ունի հատկապես վերջին տասնամյակների ընթացքում եւ աճել է ամենուր: Իսկ հիմնական պատճառների թվում են հայտնվել անառողջ սնունդը, մթնոլորտի աղտոտվածությունը, ծխախոտը եւ այլն: Ինչպես նշեց «Ընտանիքի պլանավորման եւ սեռական առողջության կենտրոնի վերարտադրողական բաժնի ղեկավար, ԵՊԲՀ-ի մանկաբարձության եւ գինեկոլոգիայի ամբիոնի դոցենտ Գեորգի Պողոսյանը «Հենարան» ակումբում ասուլիսի ժամանակ, ամենամեծ պատճառը սեռավարակներն են: Անպտղությունը կազմված է երկու մասից` անպտղություն եւ կրելախախտ, ասաց պրն Պողոսյանը եւ բացատրեց. «Երբ կանայք չեն կարողանում երեխա**



**ունենալ եւ հաճախակի վիժում են: Մեր-երկու վիժումը նույնպես բերում է չբերության: Սեռավարակներից ամենահաճախ չբերություն առաջացնող են համարվում օրիապլազման, խլամիդիան, գառնիռլան, եւ այդ երեք ինֆեկցիաները հիմնական նպաստողն են անպտղության»: Հաճախ արտագնա աշխատանքի մեկնածները վարակվելով չեն բուժվում եւ վարակը փոխանցում են իրենց կանանց, ու 8-10 շաբաթական հղիությունները ավարտվում են վիժումով: Մասնագետը նշեց նաեւ, որ սեռական կյանքի սկիզբը երիտասարդացել է, եւ հայերը չգիտես ինչու չեն սիրում պահպանակներից օգտվել, որի պատճառով էլ սեռավարակները կամաց-կամաց շատանում են: Նաեւ մեծ դեր ունեն չբերության մեջ վիրուսային հիվանդությունները, որոնք առաջացնում են պտղի կրելախախտի երեւույթներ եւ 4,5 ամսական պտուղը վիժում է կամ էլ շատ հազվագյուտ դեպքերում ծնվում են արատավոր երեխաներ: Չբերության պատճառների թվում պրն Պողոսյանը թվարկեց նաեւ խիստ դիետաները, որոնց ընթացքում խախտվում է համաչափ հակակշռային սնունդը, ինչից էլ վնասվում է օրգանիզմի իմունիտետը եւ դառնում անպտղության հիմք: Ոչ առողջ ապրելակերպը, գոտկատեղից ցածր նեղ ջինսեր կրելը դեֆորմացնում են կնոջ կոնքոսկրերը ու դառնում պատճառ, մրսածության հետ միասին, անպտղության: Վնասակար են նաեւ ալկոհոլը, թմրամոլությունը, ոչ ճիշտ հիգիենայի կանոնների պահպանումը: Եթե ամուսնական զույգը ամուսնանալուց 6 ամիս անց չի սպասում բալիկի, ապա անպատճառ պետք է դիմեն բժշկի, խորհուրդ էր տալիս մասնագետը, ավելացնելով, որ սպորտով զբաղվելը, լողավազան գնալը կարեւոր գործոններ են»:**

**«Ազգի» հարցին պատասխանելով` մասնագետն ասաց. «Սթրեսային իրադրությունները հանգեցնում են նրան, որ խախտվում են էնդոկրինային համակարգը, խախտվում է ձվազատումը, եւ դրա պատճառով սկսվում է ամլությունը: Սթրեսային իրավիճակները կարող են կապված լինել կենցաղի հետ, եւ որքան էլ թվացյալ սթրեսը մարում է, սակայն հոգեբանական սթրեսը` մշտապես հղիանալու ձգտումը, բերում է չբերության: 1990-ականներին չբերության տոկոսը կտրուկ բարձրացավ` կապված մթի, ցրտի, նավթավառների, անորակ սննդի ու հոգեբանական վիճակներից»:**

**Եթե ուզում ենք առողջ սերունդ, սպասված հղիություն, ուստի պետք է զգույշ լինել ու խստագույնս հետեւել առողջությանը, խուսափել առանց պահպանակի սեռական կապերից ու զբաղվել առողջ ապրելակերպով:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Սիրիայի իշխանությունները ընդունել են ընդդիմության հետ բանակցելու Արաբական լիգայի առաջարկը

*Դա ենթադրում է Թուրքիայի սիրիական քաղաքականության ձախողումը տարածաշրջանային բոլոր հավակնություններով հանդերձ*

Մինչ սիրիական ընդդիմությանը աջակցող Թուրքիան իր տարածքում նպաստում էր այսպես կոչված ազատ Սիրիայի բանակի կազմավորմանը, նոյեմբերի 2-ին, ինչպես նշել էր «Դունյա Բյուլթենի» լրատվական գործակալությունը, Դամասկոսը մեղադրեց Անկարային:

Ըստ թուրքական գործակալության, Սիրիայի փոխարտգործնախարար Ֆայսալ Միքդադը երկրում ծայր առած խժդժությունները որակել է ահաբեկչական գործողություն, եւ այդ ահաբեկչության համար մեղադրել է Լիբանանին, Սաուդյան Արաբիային, Հորդանանին, ինչպես նաեւ Թուրքիային:

Միքդադը ընդունելով հանդերձ իշխանությունների սխալը, մասնավորապես անհրաժեշտ բարեփոխումներում հապաղելը, միաժամանակ նշել է, որ անտեսվում է սիրիական անվտանգության ուժերի 1500 ծառայողի սպանությունը երկրում: Նա, նկատի ունենալով երկրի քաղաքական զարգացումներին արտաքին միջամտության հավանականությունն ու նշված երկրների միջամտելու հնարավորությունը, ընդգծել է. «Բացառվում է արտաքին որեւէ միջամտության դրսեւորում մեր երկրի զարգացումներին: Չենք ասում, որ մեր երկրում ծավալվող ահաբեկչությունն անմիջականորեն ֆինանսավորում են Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, Լիբանանի եւ Թուրքիայի կառավարությունները, սակայն ահաբեկիչները ֆինանսական միջոցներ են ստանում այս երկրների ոչ պաշտոնական կառույցներից: Դա միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում է, նշանակում է՝ ահաբեկչության սատարում: Նրանց հասկացրած միջոցներն օգտագործում են սիրիացիներին սպանելու նպատակով»:

Անկարան դեռեւս չի պատասխանել Սիրիայի փոխարտգործնախարար Միքդադին: Սակայն պատասխան է տալիս այսպես կոչված ընդդիմության ներկայացուցիչներին, այդ թվում՝ ազատ Սիրիայի բանակի «հրամանատար», գնդապետ Ռիադ ալ Ասադին: Ի դեպ, նա «Ինդիփենդընթի» վկայությամբ գտնվում է Սիրիային սահմանակից Հաթայի վիլայեթում, թուրքական գաղտնի ծառայությունների պաշտպանության տակ, Հաթայից էլ ղեկավարում է Սիրիայի խռովարարներին:

Գնդապետ Ռիադ ալ Ասադը դեռեւս հոկտեմբերի 10-ին անգլիական թերթի հարցերին պատասխանելիս խոստովանել է, որ ահաբեկչություն է կազմակերպում սիրիական անվտանգության ուժերի դեմ, սիրիական բանակում ունեն 10-15 հազար կողմնակիցներ եւ ինքը սերտ կապի մեջ է Սիրիայում գործող «Ազատ սպաներ» շարժման հետ: Մինչ այդ, «Ազատ Սիրիայի» բանակի ինքնակոչ հրամանատարը «Ռոյթերին» տված հարցազրույցում հայտարարել էր, որ նախագահ Բաշար Ասադին տապալելու միակ ձեւը ուժի գործադրումն է:

Այլ կերպ, Թուրքիան, անկախ Սիրիայի փոխարտգործնախարար Միքդադի հայտարարությունից, լիովին ներգրավված է սիրիական խժդժություններում, պարզապես գործում է սիրիացի վարձկանների միջոցով, ինչպիսին է գնդապետ Ռիադ ալ Ասադը: Հատկանշական է, որ այդ ներգրավվածությունը, չնայած Թուրքիայի հետ ունեցած հակասություններին, խրախուսում են Իսրայելում: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Հաարեցի» հոկտեմբերի 31-ի համարին, որտեղ գրված է. «Սիրիայի նախագահ Բաշար Ասադի ճակատագիրը վարչապետ Էրդողանի ձեռքերում է: Եթե սիրիական ընդդիմությանը հաջողվի Թուրքիայի աջակցությամբ տիրել երկրի հարավ-արեւմտյան քաղաքներին, ապա կփշրվեն Ասադին իշխանության ղեկին պահող բոլոր հավասարակշռությունները»: Իսրայելական թերթը միջամտությունից խուսափելու համար քննադատել է ՆԱՏՕ-ին, Արաբական լիգային եւ ՄԱԿ-ին:

«Հաարեցը» Սիրիայում լիբիական սցենարի կրկնությո՞ւնն է ցանկանում, թե՞ վարչապետ Էրդողանին սիրաշահելու միջոցով ռազմական գործողությունների հրահրում Թուրքիային, չգիտենք:

Բայց որ Արաբական լիգան ի սկզբանե մերժել է Սիրիայի դեմ ռազմական որեւէ գործողություն, ընդ որում հենց ՆԱՏՕ-ի, կասկածից վեր է: Խնդիրը, սակայն, ոչ այնքան Արաբական լիգայի մինչ այդ արված հայտարարություններն են, որքան այս կազմակերպության արտգործնախարարների կոմիտեի նոյեմբերի 2-ին Կահիրեում գումարված արտակարգ նիստը, որը տեւել է մինչեւ լույս գիշեր:

Նիստում ընդունվել է կարգավորման մի ծրագիր, ըստ որի նախատեսվում է սիրիական զորքերի դուրսբերումը բնակավայրերից, ազատ են արձակվում հակակառավարական ցույցի մասնակիցները, Սիրիա են գործուղվում Արաբական երկրների դիտորդները, ինչպես նաեւ ընտրության եւ իշխանության միջեւ Կահիրեում երկխոսություն սկզբնավորելու համար Արաբական լիգան ձեւավորում է հանձնաժողով, որին կգլխավորի Քաթարը:

«Դունյա Բուլթենի» կայքէջի վկայությամբ, նախագահ Բաշար Ասադի վարչակարգը ընդունել է Արաբական լիգայի առաջարկած ծրագիրը: Պարզապես ընդդիմության ներկայացուցիչներն են հակադրվում: Վերջիններս Կահիրեում Արաբական լիգայի կենտրոնակայանի մոտ բողոքի ցույց են կազմակերպում: Ըստ երեւույթին ի չիք են դառնում ընդդիմության արտաքին միջամտության հետ կապված հույսերը: Խնդիրը, սակայն, սոսկ սիրիական ընդդիմությունը չէ, այլ ընդդիմությանը հովանավորող, ապաստան տրամադրելու միջոցով սիրիական իրադարձություններում ներգրավվածություն ապահովող Թուրքիան, որն էլ ծրագրի իրագործման դեպքում կանգնում է Սիրիայի հարցում նախաձեռնությունն Արաբական լիգային զիջելու փաստի առջեւ: Դա ենթադրում է ձախողում արաբական ողջ աշխարհում, տարածաշրջանում առանցքային դեր խաղալու, տարածաշրջանային գերտերություն դառնալու եւ իսլամական աշխարհը գլխավորելու բոլոր հավակնություններով հանդերձ:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՀԱԿԱԻՐԱՆՅԱՆ

# Ըստ «Գարդիանի»՝ բրիտանացիները պատրաստվում են հարվածել Իրանին

*Իսրայելի եւ ԱՄՆ-ի մասնակցությունը չի բացառվում*



**Մեծ Բրիտանիան մշակում է ռազմական գործողությունների ծրագրեր՝ ի դեպս, եթե ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները հրթիռահարվածներ հասցնեն Իրանի միջուկային օբյեկտներին: Այդ մասին հաղորդում է The Guardian թերթը:**

**Բրիտանական կառավարության աղբյուրներ վկայակոչելով, թերթը գրում է, որ Արեւմուտքը հարաճուն եկյուղներ ունի ուրանի հարստացման իրանական ծրագրի պատճառով:**

**Թերթի տվյալներով, Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունում ստեղծվել է հատուկ խումբ, որը ռազմական գործողության ծրագրեր է կազմում Իրանի վրա ԱՄՆ-ի հնարավոր հարձակմանը միանալու նպատակով:**

**Այդ ծրագրերով մասնավորապես նախատեսվում է Իրանի մերձակա ջրատարածք տանել «Թոմահավկ» հրթիռներով զինված բրիտանական ռազմանավեր: Նաեւ ենթադրվում է օդուժի կիրառություն: Ցամաքային լայնածավալ ներխուժում չի նախատեսվում, բայց Իրանի տարածքում հատուկ ջոկատների օգտագործումը չի բացառվում:**

**ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների հատուկ ծառայությունները տեղեկություններ են ստացել, որ Իրանը ուրանի հարստացման ցենտրիֆուգները իբր տեղափոխում է ստորգետնյա ամրացված բունկերներ: Դրանք լեռան տակ են, Ղում քաղաքի շրջանում, գրում է բրիտանական թերթը:**

**Արեւմուտքի փորձագետները կարծում են, որ մեկ տարվա ընթացքում իրանական բոլոր ցենտրիֆուգները կհայտնվեն բունկերներում, եւ դրանից հետո անհնար կլինի հրթիռահարվածներով ոչնչացնել այդ ամենը: Իսկ հարստացված ուրանը կարող է օգտագործվել ատոմային ռումբի ստեղծման համար:**

**Բրիտանական կառավարության ներկայացուցիչներից մեկը մտահոգություն է արտահայտել այս առնչությամբ: Թերթը նաեւ գրում է, որ Իսրայելը ԱՄՆ-ին հորդորել է «չհետաձգել ռազմական գործողությունները մինչեւ այն պահը, երբ չափազանց ուշ կլինի»:**

**Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն եւ պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը փորձում են կառավարության անդամների համաձայնությունն ստանալ իրանական միջուկային օբյեկտներին հարվածելու հարցում: «Հաարեց» թերթի տվյալներով, արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը արդեն դարձել է հակաիրանական գրոհների կողմնակից:**

**Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի հակաիրանական «կանխիչ» հարվածների հնարավորությանը, բրիտանական կառավարությունում չեն բացառում, որ ամերիկացիները Իրանի միջուկային օբյեկտներին հարվածելու որոշում կընդունեն՝ վախենալով հետագայում դրանց անխոցելիությունից:**

**Բրիտանացիները պատրաստ են օժանդակել ամերիկացիներին՝ ուղարկելով ռազմանավեր եւ սուզանավեր, ինչպես նաեւ ամերիկյան զորքերին տրամադրելով Հնդկական օվկիանոսի Դիեգո Գարսիա կղզու ռազմակայանը:**

**Մեծ Բրիտանիայի կառավարությունում, սակայն, քիչ հավանական են համարում, թե Բարաք Օբաման կհամարձակվի Իրանի վրա հարձակվել նախքան 2012 թ. նոյեմբերյան նախագահական ընտրությունները: Իսրայելը ԱՄՆ-ին քանիցս կոչ է արել ոչնչացնել Իրանի միջուկային օբյեկտները եւ հիմա էլ լրջորեն քննարկում է Իրանին ինքնուրույնաբար հարվածելու հնարավորությունը, բայց ԱՄՆ-ը նրան հետ է պահում նման քայլից, գրում է բրիտանական թերթը:**

Պ. Ք.

# Պուտինը՝ ամենաազդեցիկ մարդկանց եռյակում

**Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը վերստին հայտնվել է «Ֆորբս» հանդեսի կազմած աշխարհի ամենաազդեցիկ մարդկանց առաջին եռյակում: Անցյալ տարվա ցանկում Պուտինը զբաղեցնում էր 4-րդ տեղը, մինչդեռ 2009-ին նա 3-րդ տեղում էր: Հանդեսի կազմած ցանկում այս տարի ընդգրկված է 70 մարդ:**

**Ըստ «Ֆորբսի», ներկայումս աշխարհի ամենաազդեցիկ մարդը ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման է (անցյալ տարի նա 2-րդ տեղում էր): Չնայած երկրի տնտեսական անկմանը եւ գործազրկության բարձր մակարդակին, հանդեսը նշում է ԱՄՆ նախագահի հաջողությունները միջազգային ասպարեզում: Օբամայի շնորհիվ ԱՄՆ-ը մնում է աշխարհի ամենաազդեցիկ պետությունը: Ցանկի կաղակցությամբ Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Օբամայի ազդեցությունը անվիճելիորեն ուժեղացել է «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենի սպանության եւ Լիբիայում ՆԱՏՕ-ի հաջող գործողության շնորհիվ: Վերջինս ավարտվեց Մուամմար Քադդաֆիի սպանությունից հետո:**

**2012-ի ՌԴ նախագահական ընտրություններին մասնակցելու մտադրություն արտահայտած Վլադիմիր Պուտինը այս տարվա ցանկում երկրորդն է, մինչդեռ ՌԴ գործող նախագահ Դմիտրի Մեդվեդեւը 59-րդ տեղում է:**

**Երրորդ տեղում է անցյալ տարվա ցանկի առաջատար, ՉԺՀ նախագահ Հու Ցզինտաոն: Ցանկի հեղինակները դա բացատրում են նրանով, որ Ցզինտաոն շուտով թողնելու է ՉԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարի պաշտոնը: Սպասվում է, որ նրա իրավահաջորդը կդառնա Սի Ցզինպինը, որը ցանկում զբաղեցնում է 69-րդ տեղը:**

**Չորրորդ տեղում է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, հինգերորդում՝ Microsoft-ի հիմնադիր Բիլ Գեյթսը:**

**«Ֆորբսի» ցանկում ամենաերիտասարդը Facebook սոցիալական ցանցի հիմնադիր, 27-ամյա Մարկ Ցուկերբերգն է (9-րդ տեղ): Անցյալ տարի նա զբաղեցնում էր 40-րդ տեղը: Առաջին տասնյակում հայտնվել են նաեւ Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդուլլահ իբն Աբդել Ազիզը (6-րդ տեղ), Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը (7-րդ տեղ), ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի ղեկավար Բեն Բեռնանկեն (8-րդ տեղ), Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը (10-րդ տեղ):**

# Լոս Անջելեսում շներն առանց տուգանքի կհաչեն միայն 10 րոպե

Լոս Անջելեսի դատարանը քաղաքային իշխանություններին պարտադրել է ընտանի կենդանիներին վերաբերող օրենքներում կատարել փոփոխություններ, որոնց համաձայն շատ երկար հաչող շների տերերը պետք է տուգանվեն: Այդ մասին հաղորդում է «Լոս Անջելես թայմս» թերթը:

Դատավճիռը ընդունվել է քաղաքի բնակիչ Գերի Լեոնարդի բողոքի քննարկման ժամանակ: Հարեւանի շան ականջ ծակող շուրջօրյա հաչոցը մեկ տարվա ընթացքում վերջնականապես քայքայել է այդ մարդու նյարդերը:

Դատարանի վճիռը ենթադրում է, որ փոփոխությունների կատարումից հետո շներին կթույլատրվի հաչել միայն 10 րոպե, իսկ 3 ժամվա ընթացքում՝ մինչեւ 30 րոպե: Հաչոցի տեւողությունը կչափեն վերահսկողության քաղաքային ծառայության աշխատակիցները:

Իր կենդանու առաջին «զանցանքի» համար տերը ստիպված կլինի վճարել 250 դոլար տուգանք, երկրորդի համար՝ 500, երրորդի դեպքում՝ 1000 դոլար: Նոր կանոնները կտարածվեն ինչպես տեղական շների, այնպես էլ քաղաքի «հյուրերի» վրա:

ՀՅՈՒՐԱԽԱՂ

# «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր համույթը Սոչիի հայկական համայնքում

Սոչիի հայկական համայնքը ցնծության եւ հրճվանքի բերկրալի պահեր ապրեց հոկտեմբերի 12-ին համերգային հարուստ ծրագրով ծովափնյա հանգստավայր ժամանած «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր համույթի անմոռանալի ելույթների շնորհիվ: Սոչիի հայ հանդիսատեսը մեկ անգամ արդեն հնարավորություն էր ունեցել հոտնկայս ծափահարելու վաստակավոր անսամբլի կատարումները: Դերասանների նոր համերգներին բոլորն սպասում էին անսահման անհամբերությամբ:

Այս տարվա համերգային հաղթարշավը համույթը տրամաբանորեն նվիրել էր Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-ամյա հոբելյանական տարեդարձին: Ադլերի համերգային դահլիճներից մեկում, որտեղ «Սայաթ-Նովան» հավաքել էր իր երկրպագուներին ու աշուղական արվեստի ջատագովներին, համույթը հանդիսավորությամբ ու կատարյալ վարպետությամբ ներկայացրեց իր բովանդակալից, բազմաժանր երկերով ու կոմպոզիցիաներով հարուստ ծրագիրը: Համույթի երգացանկը բաղկացած է շուրջ 400, ինչպես անցյալի աշուղական երգարվեստի բացառիկ նմուշներից, այնպես էլ մեր ժամանակների աշուղների ստեղծագործություններից:

Դահլիճը ամբողջ երեկոյի ընթացքում ցնծում էր ծանոթ ու հոգեհարազատ երգ-երաժշտության ծովում, երգակցում մենակատարներին, խմբերգերին, նրանց հետ վերհիշում մոռացված երգերի բառերը:

Հինավուրց աշուղական նվագարանները առանձնահատուկ հմայքով էին հնչում վարպետների ձեռքին, երգերի քաղցրահունչ ելեւէջները նորովի էին բխում երգիչ-երգչուհիների շուրթերից, ասես սարերի հեռվից օտարության ցուրտ ու խորթ արահետներին գտնվել էին իրար կորցրած հայր եւ որդի:

Բուռն ծափահարությունների ներքո ինքնատիպ տարազներով պճնված երաժիշտները ողջ երեկոյի ընթացքում ոչ մի անգամ չլքեցին բեմահարթակը՝ հանդիսատեսին ամենայն խանդավառությամբ ներկայացնելով իրենց երգացանկի լավագույն նմուշները. «Քյամանչա», «Քանի վուր ջան իմ», «Խելքի աշեցեք» եւ այլ աշուղական արվեստի գլուխգործոցներ:

«Սայաթ-Նովան» ոչ միայն աշուղական երգի համույթ է, այլ նաեւ հայ բանահյուսության ու ազգագրական մշակույթի մեծ դպրոց, դարավոր ավանդույթների, սովորույթների, ծեսերի, ժողովրդի հոգեւոր արժեքների շտեմարան, որտեղ ուսումնասիրվում, դասավանդվում եւ պահպանվում են հայ ազգի հոգեւոր հարստության եզակի գանձերը: Պատահական չէ, որ համույթի բոլոր ելույթներն ուղեկցվում են հատուկ մեկնաբանություններով, բացատրություններով ու պարզաբանումներով: Խմբի գեղարվեստական ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր **Թովմաս Պողոսյանը** ներկաների համար յուրօրինակ «դասախոսություն» է անցկացնում աշուղական արվեստի թեմայով, որի ընթացքում հանգամանորեն պատմում է մշակույթի այդ տեսակի ժանրային առանձնահատկություններն ու ճանաչողական նշանակությունը, ներկայացնում հայ նշանավոր աշուղներին ու նրանց ստեղծագործությունները, մանրամասնորեն բնութագրում իր ստեղծած «Սայաթ-Նովա» մշակութային միության ուսումնասիրության ու գործունեության ոլորտներն ու կից կառույցները, աշուղական արվեստի բաղկացուցիչ մասը կազմող նվագարանների դերն ու նշանակությունը, առանձնահատկություններն ու արժեքը: Սիրելի վարպետը միեւնույն ժամանակ սփյուռքի հայությանը կոչ է անում համախմբվել, միասնական պայքար մղել հայ ազգի հոգեւոր արժեքները, լեզուն, հավատքը, ինքնատիպությունը պահպանելու եւ ապագա սերունդներին անփոփոխ ձեւով հանձնելու համար: «Սայաթ-Նովան» իր համերգներով ու դասախոսություններով շրջագայելով սփյուռքի հայահոծ բնակավայրերով՝ ստանձնում է կամավոր դեսպանի առաքելությունը, ակամայից մասնակից դառնալով հայ ժողովրդի աշխարհով մեկ սփռված զավակներին ուծացման վտանգից փրկելու սրբազան գործին:

Իր առաջիկա ծրագրերի եւ պլանների շուրջ մեզ հետ կիսվեց Թովմաս Պողոսյանը. «Մեզ համար այսքան կարեւոր համերգային շրջագայության համար մեր կոլեկտիվը եւ ես անձամբ խորապես երախտապարտ ենք Սփյուռքի նախարարությանը հանձին նախարար Հրանուշ Հակոբյանի եւ Սոչիի հայկական համայնքի ղեկավարությանը՝ Ռուսաստանի հայերի միության Սոչիի տարածաշրջանի նախագահ Հրաչ Մակեյանի գլխավորությամբ: Նրանց շնորհիվ մեր ազգի աշուղական արվեստի գոհարները հասանելի դարձան սփյուռքի հայության գոնե մի մասին: Մյուս տարի լրանում է Սայաթ-Նովայի 300-ամյակը: Այս հոբելյանական փառապանծ տարեդարձին պատրաստվում է ոչ միայն մեր մշակութային միությունը, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը:

Այս տարեդարձի կապակցությամբ «Սայաթ-Նովա» Աշուղական արվեստի միությունը նախատեսել է «UNESCO»-ի հետ համատեղ կազմակերպել միջազգային փառատոն եւ գիտաժողով՝ նվիրված Սայաթ-Նովային: Համույթը մեծն աշուղի երկերի հարուստ ծրագրով համերգների շրջագայություն է կազմակերպելու, ինչպես Հայաստանի եւ Արցախի, այնպես էլ Սփյուռքի հայահոծ համայնքներով: Մեր առաջնահերթ պլանների մեջ են նաեւ Սայաթ-Նովայի երգերի ձայնագրյալ երգարանի եւ «Սայաթ-Նովան աշուղների խաղերի մեջ» ժողովածուի հրատարակությունները»:

**ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ**

# Անհերքելի վկայություն

Հայոց ցեղասպանությունը ոչ միայն չի մոռացվում, այլեւ ունենում է իր հին գաղտնիքների նորանոր բացահայտումներ, որոնք ավելի են ամբողջացնում նախորդ դարասկզբին մարդկության դեմ գործված ոճիրի պատկերը: «Ցեղասպանությունների դար» հորջորջված 20-րդ դարը բնութագրող գրքերում, որ 21-րդ դարասկզբին լույս են տեսել ԱՄՆ-ում եւ Եվրոպայում, մարդկության դեմ գործված մեծագույն հանցանքը՝ հայերի ցեղասպանությունը, երբեմն չի էլ հիշատակվում, իսկ Թուրքիայի ներկա կառավարությունը ցեղասպանության իրողությունը՝ իր նախորդների կատարած ոճիրը հերքող իր «հրաժարելով հրաժարիմք»-ը ամենուր հնչեցնում է այնպիսի անհեթեթ համոզվածությամբ, ինչպես բոլոր իրենց հորինած ստերին լրջորեն հավատացողները, որ հետո, ուշացած զղջումով, իրենք իրենց են դատապարտում: Պայմանական այդ «հետո»-ն էլ, թեեւ ուշացումով, հիմա է եկել, եւ ինչքան շուտ կայանա խոստովանությունը, այնքան թեթեւ կլինի քավության բեռը:

Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետում հոկտեմբերի 24-ին կայացավ **Ռոզմարի Հարությունյան-Քոհենի** «Վերապրած խոյեցի Արուսյակը» գրքի շնորհանդեսը՝ պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների մասնակցությամբ, հեղինակի, թարգմանչի, խմբագրի ներկայությամբ: Գիրքը 2002 թ. անգլերեն թարգմանությամբ լույս էր տեսել ԱՄՆ-ում, 2006 թ.-ին՝ պարսկերեն լեզվով Թեհրանում եւ ահա 2011 թ.-ին՝ հայերեն հրատարակությամբ՝ Երեւանում, որն իրականացրել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներ հիմնադրամ»-ի գործադիր տնօրենի, ինչպես նաեւ Հարությունյանների ընտանիքի նյութական աջակցությամբ:




Բացելով շնորհանդեսը՝ արեւելագիտության ֆակուլտետի դեկան, **պրոֆ. Գ. Մելիքյանը** համառոտ ներկայացրեց գրքի հրատարակման պատմությունը եւ նրա կարեւորությունը հայոց պատմության ոչ հեռու անցյալի գաղտնիքները բացահայտելու գործում: Վաստակաշատ գրականագետ, **պրոֆ. Սամվել Մուրադյանը**, ով անգլերենից թարգմանված գիրքը բացառիկ վարպետությամբ վերածել է գրական ոսկեղենիկ արեւելահայերենի եւ գրել բնութագրական առաջաբան, խոսելով գրքի արժանիքների մասին՝ մասնավորապես ասաց, որ այն միայն 1917-18 թթ. Խոյի հայության ջարդից հազիվ փրկված Արուսյակի կյանքի պատմությունը չէ՝ գրառված նրա թոռան՝ գրողի եւ գեղանկարչի ձիրքերով օժտված Ռոզմարի Հարությունյանի ձեռքով: Գիրքն ունի ոչ միայն գեղարվեստական, այլեւ պատմաճանաչողական ու ազգագրական որոշակի արժեք, որովհետեւ նրա էջերում ներկայացված են ոչ միայն գրական կերպարի մակարդակը բարձրացած իրական մարդկային բնավորություններ, այլեւ պատմական այն միջավայրը, բարքերն ու կենցաղը, որով ժամանակին ապրել է իրանահայության մի հատվածը: Հեռավոր ժամանակներից Պարսկահայքում՝ Խոյում եւ նրա շրջակայքում հաստատված հայերը պարսիկների հարեւանությամբ ապրել են խաղաղ, բարիդրացիական պայմաններում՝ իրենց ազգային դիմագիծը, հավատքը, սովորույթները պահպանելով: Գրքում շատ գեղեցիկ էջեր կան պարսկահայերի համայնքային սովորույթներն ու ծիսական արարողությունները պատկերող: Բայց ահա հայության այդ հատվածի խաղաղ ու բարեկեցիկ կյանքին էլ միջամտում է թուրքական յաթաղանը. թուրք ջարդարարները 1917 թ,. օգտվելով պարսկական պետականության թուլությունից, հայերին իսպառ բնաջնջելու մոլուցքով ներխուժում են Իրան եւ իրագործում Խոյի հայության կոտորածը, որի վկայագրողն է Ռոզմարին՝ իր տատ Արուսյակի եւ ուրիշ ականատեսների պատումներն ի մի բերելով: Արուսյակ Հայրապետյանի պատումները, որ գրառել է նրա թոռ Ռոզմարին, անշուշտ նման են թուրք փաստաբան Ֆեթհիյե Չեթինի գրքում Բալուի հայերի կոտորածների մասին նրա հայուհի տատի՝ Հերանուշ Կասարյանի՝ թրքացած Սեհերի վկայագրություններին: Ակնհայտ է, որ պետականորեն մշակված եւ հաստատված ծրագրով գործող թուրքերը թե Արեւմտահայաստանում, թե՝ Պարսկաստանում հայերին ջարդելիս գործել են նույն դաժան ձեռագրով, անպատժելիության նույն անամոթ հեռանկարով: Դահլիճը սարսռաց, երբ խմբագիրն արտասանեց իր հոգեւոր հոր եւ ավագ ընկերոջ՝ Մեծն Հովհ. Շիրազի հետեւյալ տողերը.

*Թուրքն հայի արնից*
*ձեռքերը հանում*
*Ասծու արցունքի*
*մեջ է լվանում,*
*Սրբում սրբիչով ազ-*
*գերի տված,*
*Սրբիչ լռությամբ*
*նրանց անաստված...*

Ռ. Հարությունյան-Քոհենը հավատարիմ է մնացել պատմական ճշմարտությանը՝ դեպքերը ներկայացնելով եղածին պես: Խոյի հայության ջարդն էլ ուղեկցվել է թուրքերին բնորոշ բացառիկ վայրագություններով. անխնա սպանել են առանց սեռի եւ տարիքի խտրության, չեն խնայել անգամ հղի կանանց՝ պատռելով նրանց որովայնը եւ թրատելով դեռ չծնված պտուղներին: Համատարած սպանդից մարդիկ փրկվել են կամ կազմակերպված ինքնապաշտպանության, կամ հարեւան պարսիկների անձնազոհ բարյացակամության շնորհիվ: Իրական անձնավորություններ են եւ Եփրեմի նման հերոսը, եւ պարսիկ բժիշկ Էֆթեխարը, որը ամեն կերպ ջանացել է օգնել ծայրահեղ թշվառ վիճակում հայտնված հայերին: Գիրքը, ասաց պրոֆ. Ս. Մուրադյանը, գրված է ջերմությամբ ու նախանձախնդրությամբ, ընթերցվում է հետաքրքրությամբ: Այն ավելի հավաստի են դարձնում հերոսների, տեղավայրերի լուսանկարներն ու հեղինակի յուղանկար գործերի լուսապատճենները, եղելությունների վավերականությունը հաստատող փաստաթղթերը:

Թարգմանիչ Արա Հ. Ավանեսյանն իր խոսքում ընդգծեց իր թարգմանած գրքի՝ գրական հայերենի վերածելու ուղղությամբ պրոֆ. Ս. Մուրադյանի կատարած հիրավի մեծ աշխատանքը:

Վերջում հրատարակիչներին, թարգմանչին, խմբագրին եւ իր գրքի տպագրության աջակիցներին իր շնորհակալությունը հայտնեց հեղինակը՝ Ռոզմարի Հարությունյան-Քոհենը՝ ներկայացնելով նաեւ գրքի ստեղծման պատմությունը:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՓԱՐՅԱՆ**

# Եգիպտոսի մշակույթի օրեր՝ նոյեմբերի 4-11-ը

Հայաստան-Եգիպտոս մշակութային համագործակցության, ինչպես նաեւ 2 պետությունների կողմից ստորագրված միջկառավարական համաձայնագրի եւ միջգերատեսչական ծրագրերի շրջանակներում երկու երկրներում փոխադարձաբար անցկացվում են մշակույթի օրեր: 2010 թ. սեպտեմբերի 17-23-ը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում անցկացվել են հայկական մշակույթի օրեր, որոնց «**Ազգը**» անդրադարձել է: Եվ ահա Եգիպտոսի մշակույթի օրեր են անցկացվում Հայաստանում, որի մեկնարկը կտրվի նոյեմբերի 4-ին:

Հայաստան է ժամանելու եգիպտական պատվիրակությունը՝ ԵԱՀ մշակույթի նախարարի առաջին տեղակալ Հուսամ Սաադ Զաղլուլ Նասսարի գլխավորությամբ: Հայաստանում Եգիպտոսի մշակույթի օրերի շրջանակներում կստորագրվի մշակութային համագործակցություն՝ երկու երկրների նախարարությունների միջեւ:

Եգիպտոսի մշակույթի օրերի շրջանակներում Հայաստանի ազգային պատկերասրահում կբացվի եգիպտական արվեստի, եգիպտահայ մեծանուն երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի աշխատանքների ցուցահանդեսը:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կներկայացվեն Կահիրեի օպերայի եւ բալետի ընկերության «Անկախ ամեն ինչից» եւ «Եգիպտական գիշերներ» մեկ գործողությամբ երկու բալետները:

Միջոցառումների շարքում ընդգրկված են նաեւ վարպետության դասեր: Խնկո Ապոր անվան մանկական ազգային գրադարանում կներկայացվեն «Կայան» խամաճիկների թատրոնի, ստվերների թատրոնի եւ օրիգամիի ծրագրերը, կանցկացվեն պարապմունքներ: Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում ներկայացումով հանդես կգա աշխարհի 20 լավագույն մնջախաղի վարպետներից մեկը համարվող Ահմեդ Նաբիլը:

Իսկ «Նաիրի» կինոթատրոնում կցուցադրվեն «Էլ Մոուլեդ», «Ճակատագիր», «Մեկնման ուրբաթ», «Բարձրախոս», «Մումիա» եգիպտական ֆիլմերը: Եգիպտոսի հայտնի հայազգի դերասանուհի Լիզ Սարգսյանը հանդիպումներ կունենա Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողների եւ կինոգետների հետ:

Հայաստանի գրողների միությունում տեղի կունենա բանաստեղծ Հուսամ Նասսարի բանաստեղծությունների «Մոլորված՝ փնտրում եմ երկիր» խորագրով ժամանակակից պոեզիայի ժողովածուի հայերեն թարգմանության շնորհանդեսը (արաբերենից տողացի թարգմանությունը՝ Հովհաննես Ասատրյանի, բանաստեղծության վերածումը՝ Հովիկ Հովեյանի):

**Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

# Մեկնարկում հաղթանակ եւ ոչ-ոքի



Շախմատի Հայաստանի տղամարդկանց հավաքականը հաղթանակով մեկնարկեց Հունաստանում սկսված Եվրոպայի թիմային առաջնությունում: Հայ շախմատիստները 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին Ավստրիայի հավաքականին: Միակ կես միավորը մրցակցին զիջեց առաջին խաղատախտակի վրա Լեւոն Արոնյանին փոխարինած Սերգեյ Մովսիսյանը՝ հաշտություն կնքելով Մարկուս Ռագերի հետ: Վլադիմիր Հակոբյանը հաղթեց Ստեֆան Կինդերմանին, Գաբրիել Սարգսյանն առավելության հասավ Դավիթ Շենգելիայի նկատմամբ, իսկ Ռոբերտ Հովհաննիսյանը պարտության մատնեց Ռոբերտ Կրեյսլին:

Իսկ ահա մեր շախմատիստուհիները ոչ-ոքի խաղացին չեխերի հետ: Առաջին երկու պարտիաներում Լիլիթ Մկրտչյանն ու Մարիա Կուրսովան հաշտություն կնքեցին համապատասխանաբար Կատերինա Նեմցովայի եւ Թերեզա Օլսարովայի հետ: 3-րդը մրցավեճն ավարտած Լիլիթ Գալոյանը պարտվեց Քրիստինա Հավլիկովային: Էլինա Դանիելյանը երկարատեւ պայքարից հետո 130-րդ քայլին մատ հայտարարեց Եվա Կուլովանային ու իր թիմին փրկեց պարտությունից:

Տղամարդկանց մրցաշարում ռուսները 2,5-1,5 հաշվով հաղթեցին մոլդովացիներին, ուկրաինացիները 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին Սլովենիայի հավաքականին, ադրբեջանցիներն առավելության հասան իտալացիների նկատմամբ՝ 2,5-1,5:

Կանանց մրցաշարում գրանցված առավել հետաքրքրական արդյունքներն են. Ռուսաստան-Իսրայել՝ 3-1, Հունաստան-Ուկրաինա՝ 1,5-2,5, Վրաստան-Ադրբեջան՝ 2,5-1,5:

# Ռոնալդուի հոբելյանական գոլերը «Ռեալին» ուղեգիր պարգեւեցին



Մադրիդի «Ռեալը» ժամկետից շուտ նվաճեց չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի ուղեգիր՝ Լիոնում Քրիստիանու Ռոնալդուի խփած 2 գոլերի շնորհիվ հաղթելով տեղի համանուն թիմին: 69-րդ րոպեին 11 մ հարվածով խփած 2-րդ գոլը Մադրիդի «Ռեալի» կազմում Ռոնալդուի հոբելյանական՝ 100-րդ գնդակն էր պաշտոնական մրցումներում: Այդ սահմանագիծը պորտուգալացի ֆուտբոլիստը հատեց ընդամենը 105-րդ խաղում:

Հոբելյանական էր նաեւ Ռոնալդուի առաջին գնդակը, որը եվրոգավաթներում «Ռեալի» 900-րդ գոլն էր: Առաջին գոլը խփվել է 1955-ին: Գոլի հեղինակ է դարձել Միգել Մունյոսը: 900 գոլերից 67-ը բաժին է հասնում «Ռեալի» լավագույն ռմբարկու Ռաուլին: Ռոնալդուի հաշվին ընդհանուր առմամբ եվրոգավաթներում 32 գոլ է գրանցված: Պորտուգալացի ֆուտբոլիստներից առավել արդյունավետ է գործել լեգենդար Էյսեբիոն՝ խփելով 57 գոլ: Իսկ թիմերից եվրոգավաթներում բոլորից արդյունավետը «Բարսելոնն» է, որի հաշվին 917 գոլ է գրանցված:

Չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկությունում «Ռեալը» գերազանց է հանդես գալիս՝ շահելով բոլոր 4 հանդիպումներն ընդհանուր 10-0 հաշվով: D խմբում կայացած մյուս խաղում «Այաքսը» սեփական հարկի տակ 4-0 հաշվով ջախջախելով Զագրեբի «Դինամոյին», 7 միավորով ընթանում է 2-րդ տեղում:

A խմբում ուղեգրի նվաճմանը մոտ է Մյունխենի «Բավարիան», որը սեփական հարկի տակ 3-2 հաշվով հաղթեց իտալական «Նապոլիին»: Արդեն առաջին խաղակեսում Գոմեսը իր օգտին հեթ տրիկ ձեւակերպեց ու թվում էր, թե «Բավարիան» կջախջախի մրցակցին: Սակայն հետագայում իտալացիներին հաջողվեց կրճատել հաշիվը Ֆեռնանդեսի 2 դիպուկ հարվածների շնորհիվ: Նշենք, որ Մարիո Գոմեսը չեմպիոնների լիգայում խփած գոլերի քանակը հասցրեց 17-ի, ինչը լավագույն արդյունքն է գերմանացի ֆուտբոլիստների շրջանում: Մեկ գոլ պակաս է խփել «Բայերի» կիսապաշտպան Միխայել Բալակը: «Բավարիան» այս հաղթանակի շնորհիվ վաստակեց 10 միավոր: 2-րդ տեղում 7 միավորով «Մանչեսթր Սիթին» է, որը հյուրընկալվելիս 3-0 հաշվով հաղթեց իսպանական «Վիլյառեալին»:

B խմբում հաջող է հանդես գալիս «Ինտերը», որը 3-րդ հաղթանակը տոնեց՝ 2-1 հաշվով պարտության մատնելով ֆրանսիական «Լիլին»: Թիմին հաղթանակ բերեց խաղավարտից 7 րոպե առաջ Դե Մելոյի խփած գնդակը: Հետաքրքրական է, որ «Ինտերի» մեկնարկային կազմն ամենատարեցն էր չեմպիոնների լիգայի պատմության մեջ: 11 ֆուտբոլիստների միջին տարիքը «Լիլի» հետ խաղի օրը կազմում էր 31 տարեկան 317 օրական: Նախկին ռեկորդը պատկանում էր «Միլանին», որը 2007-ի դեկտեմբերի 4-ին մրցում էր «Սելթիկի» հետ: Այդ օրը «Միլանի» ֆուտբոլիստների միջին տարիքը 31 տարեկան 215 օրական էր:

5-ական միավորով 2-րդ եւ 3-րդ տեղերն են զբաղեցնում Մոսկվայի ԲԿՄԱ-ն եւ թուրքական «Տրաբզոնսպորը», որոնց մրցավեճում դարպասները մնացին անառիկ:

C խմբում 8-ական միավորով առաջատարներն են անգլիական «Մանչեսթր Յունայթեդն» ու Լիսաբոնի «Բենֆիկան»: Անգլիական ակումբը սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց ռումինական «Օցելուլին»: Իսկ «Բենֆիկան» «Բազելի» հետ սեփական հարկի տակ կայացած խաղում բավարարվեց ոչ-ոքի արդյունքով (1-1):

# Կլիչկոն հիշել է Վալուեւին

Չի բացառվում, որ հաջորդ տարի Կիեւում կայանա WBC-ի վարկածով գերծանրքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոյի եւ Նիկոլայ Վալուեւի մենամարտը: Այս մասին տեղեկացրել է Կլիչկո եղբայրների պրոմոութերական ընկերության տնօրեն Ալեքսանդր Կրասյուկը: Ըստ նրա ավելի լավ, քան Կիեւում չեն երկրպագի Վիտալի Կլիչկոյին: Վերջինիս երազանքն է եղել Կիեւում մենամարտելը: Այժմ այդ հնարավորությունը ստեղծվել է: Մենամարտը կարելի է անցկացնել Կիեւի վերակառուցված «Օլիմպիյսկի» մարզադաշտում, որտեղ հաջորդ տարվա ամռանը կայանալու են ֆուտբոլի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները:

Վերջերս Կլիչկոն հայտարարել էր, որ Վալուեւի հետ մենամարտելն իրեն հետաքրքիր կլինի: Ռուսաստանցի գերծանրքաշային բռնցքամարտիկը երբեք նոկաուտի չի ենթարկվել, իր անսովոր չափերով գրանցված է Գինեսի ռեկորդների գրքում:

Իր հերթին Նիկոլայ Վալուեւն էլ ուկրաինական «Բլիկին» տված հարցազրույցում եւս պատրաստակամություն է հայտնել մրցելու Կլիչկոների հետ: Նա նշել է, որ արդեն 20 տարի ռինգում է եւ իրեն մշտապես հետաքրքրել է, թե ինչպես կընթանա մենամարտը Կլիչկոների հետ: Ճիշտ է, արդեն 2 տարի Վալուեւը ռինգ դուրս չի եկել: Վերջին մենամարտը նա անցկացրել է 2009-ի նոյեմբերին՝ միավորներով զիջելով բրիտանացի Դեւիդ Հեյին: Դրանից հետո հաջորդ տարվա ընթացքում Վալուեւն ու Վիտալի Կլիչկոն փորձում էին համաձայնության գալ մենամարտի անցկացման հարցում, սակայն ֆինանսական հարցի շուրջը եղած տարաձայնությունների պատճառով այդպես էլ ռինգ դուրս չեկան: 2010-ի վերջին եւ այս տարվա սկզբին Վալուեւը 3 անգամ վիրահատվեց ու նրա մարզական կարիերան կասկածի տակ դրվեց: Սակայն ռուս բռնցքամարտիկը հայտարարել է, որ դեռ չի պատրաստվում ձեռնոցները մեխից կախել:

Ինչ վերաբերում է Վիտալի Կլիչկոյին, ապա վերջերս նա հայտարարել է, որ հաջորդ տարի եւս 1-2 մենամարտ կանցկացնի ու կավարտի բռնցքամարտիկի կարիերան: Միաժամանակ նա իր երկրպագուներին հավաստիացրել է, որ իրենից 5 տարով փոքր եղբայրը՝ Վլադիմիրը դեռեւս երկար ժամանակ նորանոր հաղթանակներով կուրախացնի մարզասերներին:



# Աննա Բաղալյանն «Ունիվերսալ մարտերի» բրոնզե մեդալակիր

Մոսկվայում ընթացող «Ունիվերսալ մարտերի» աշխարհի առաջնության կանանց մրցումներում հաջող հանդես եկավ Հայաստանը ներկայացնող Աննա Բաղալյանը: 63 կգ քաշային կարգում Աննան գրավեց 3-րդ տեղն ու արժանացավ բրոնզե մեդալի: Աննան բնակվում է Էջմիածնում, իսկ սովորում է Մոսկվայում:

«Ունիվերսալ մարտեր» (կրճատ՝ Ունիմարտ) մարզաձեւն ընդամենը մի քանի տարվա կենսագրություն ունի: Սակայն այն արագորեն տարածվում է տարբեր երկրներում եւ մարզաձեւից անցկացվում են աշխարհի ու Եվրոպայի առաջնություններ, միջազգային մի շարք մրցաշարեր: «Ունիվերսալ մարտերը» մի քանի մարզաձեւի համադրում են՝ արգելքների գոտու հաղթահարում, դանակի նետում, հրաձգություն եւ ձեռնամարտ: Գոյություն ունի նաեւ մարզաձեւի ձմեռային տարատեսակը, որում ներառված է դահուկավազքը, իսկ ձեռնամարտն անցկացվում է ձյան վրա:

«Ունիվերսալ մարտերի» Հայաստանի ֆեդերացիան ստեղծվել է սամբոյի հանրապետական ֆեդերացիայի հիմքի վրա: Ֆեդերացիայի նախագահն է Լեւոն Հայրապետյանը:

# Հանդբոլի հավաքականը կհամալրվի նոր լեգեոնականներով

Նոյեմբերի 12-14-ը մայրաքաղաքի «Դինամո» մարզամարզահում կանցկացվի ՀՀ վարչապետի գավաթի հանդբոլի միջազգային 3-րդ մրցաշարը, որն արդեն ավանդական է դարձել: Հայաստանի հավաքականն ուժերը կչափի Ռուսաստանի 2-րդ հավաքականի, Վրաստանի եւ Ուզբեկստանի ընտրանիների հետ: Մեր մրցակիցները բավականին ուժեղ են, ուստի Հայաստանի հավաքականի խնդիրն է Ֆրանսիայում Հայաստանի հավաքականի համար խաղացողներ որոնելը:

Այս տարի հանդբոլի Հայաստանի հավաքականն ավելի ուժեղ կազմով հանդես կգա ՀՀ վարչապետի գավաթի մրցաշարում: ՀՀ հավաքականում հանդես գալու ցանկություն է հայտնել Ռուսաստանում հաջող մրցելույթներ ունեցող Սամվել Ասլանյանը: Հավաքականին են



նի մարզիչներն ու մարզաձեւի հանրապետական ֆեդերացիան մեծ ծավալի աշխատանք են իրականացրել կազմն ուժեղացնելու հարցում:

Դեռեւս անցյալ տարի կայացած մրցաշարում Հայաստանի հավաքականի կազմում ընդգրկվել էին մի խումբ ֆրանսահայ հանդբոլիստներ, ինչն իր դրական արդյունքը տվեց: Նշենք, որ 2010-ի սկզբին Ֆրանսիայում պաշտոնապես հիմնվել էր «Աջակցություն հայկական հանդբոլին» համազգային կազմակերպությունը, որը մարզաձեւի հանրապետական ֆեդերացիայի հետ համատեղ աշխատում է «Մեկ ազգ, մեկ հավաքական» նշանաբանով: Կազմակերպության հիմնական խնդիրն է Ֆրանսիայում Հայաստանի հավաքականի համար խաղացողներ որոնելը: միանալու նաեւ Գերմանիայի բունդեսլիգայում բավականին ժամանակ հանդես եկած ու մեծ փորձ կուտակած Հայկ եւ Հովհաննես Կարապետյան եղբայրները:

Այս օրերին Հայաստանի հավաքականը տեղի հանդբոլիստներով մարզիչ Էդուարդ Օհանյանի գլխավորությամբ մարզումներ է անցկացնում Երեւանի տնտեսագիտական համալսարանի հարմարավետ մարզադահլիճում: Նոյեմբերի 9-ին եւ 10-ին նրանց կմիանան Ֆրանսիայում բնակվող մեր հայրենակիցներն ու Կարապետյան եղբայրները: Հիշեցնենք, որ նախորդ տարվա մրցաշարում ՀՀ հավաքականը գրավել էր 2-րդ տեղը:

# «Մարականայի» վերակառուցումը կարժենա 454 մլն եվրո

Բրազիլիայում շարունակվում են երկրի գլխավոր մարզադաշտի՝ «Մարականայի» վերակառուցման աշխատանքները: Ժամանակին աշխարհի ամենատարողունակ մարզադաշտում, որտեղ 1950-ին անցկացվել է ֆուտբոլի աշխարհի առաջնությունը, առաջիկայում նախատեսված են 2 խոշոր միջոցառումներ: Այստեղ 2014-ին կկայանա ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ հանդիպումը, ինչպես նաեւ կանցկացվեն 2016-ի ամառային օլիմպիական խաղերի բացման եւ փակման արարողությունները:

Արդեն ավարտվել են մարզադաշտի հին տանիքի քանդման աշխատանքները: 141 մլն եվրո արժողությամբ նոր ծածկի վրա կտեղադրվեն արեւային մարտկոցներ: Ընդհանուր առմամբ Ռիո դե Ժանեյրոյի գլխավոր մարզադաշտի վերակառուցման համար կծախսվի 454 մլն եվրո:

# Հատուկ մրցանակ Ֆեդեռերին

Բազելում ընթացող թենիսի մրցաշարի կազմակերպիչները հատուկ մրցանակ են հանձնել շվեյցարացի թենիսիստ Ռոջեր Ֆեդեռերին: Նա հարցման արդյունքներով ճանաչվել է Բազելի մրցաշարերին մասնակցած թենիսիստներից լավագույնը: Նրա օգտին քվեարկել է հարցման մասնակիցների 78,5 տոկոսը: 2-րդ տեղը գրավել է սերբ Նովակ Ջոկովիչը: Ֆեդեռերը հաջող է հանդես գալիս մրցաշարում: Առաջին մրցախաղում նա հաղթել է Ստարաչեին (7-6, 6-4), 2-րդ փուլում պայքարից դուրս է մղել ֆին Յարկո Նիեմինենին (6-1, 4-6, 6-3):

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

1-ին էջից

## «Նորին նախագահական մեծության» մանկական հիվանդությունը

Նրա բոլոր նախաձեռնությունները ու դիվանագիտական շփումները նպատակ ունեն ստեղծել «ԼՂ հարցի լուծման համար բարենպաստ միջավայր»: Այլ կերպ ասած՝ պաշտոնական Բաքուն «դաշնակիցներ հավաքագրելու, թիմ կազմելու» խնդիրն է դեռ փորձում լուծել:

Ասված է, իհարկե, որ դաշնակից կարող է լինել նա, ով իրենից որեւէ արժեք ներկայացնում է: Ո՞րն է Ադրբեջանի «արժեքը»: Միայն այն, որ այդ երկիրը նավթ եւ գազ, ինչպես նաեւ կոմունիկացիոն գրավչություն ունի: Բայց դրանք ահա արդեն մեկուկես տասնամյակ է, ինչ չեն դառնում «վճռորոշ գործոն»: Եվ մեկ անգամ չէ, որ այդ մասին ադրբեջանական կողմին ակնարկվել է «այս աշխարհի ուժեղներից»:

Ներկայումս պարզ է դառնում, որ Կազանի բարձր մակարդակի հանդիպմանն Իլհամ Ալիեւը «տղայորեն» փորձարկել է Ադրբեջանի «կարեւորության հաղթաթուղթը»: Եվ հաջողություն չի ունեցել: Խնդրի շուրջը բոլոր մակարդակի դիվանագիտական այլասացություններից հնարավոր է եզրակացնել, որ միջնորդներն Ադրբեջանին հորդորում են հրաժարվել «մոտ մեկ տասնյակ նոր առաջարկություններից»:

Ստացվում է, որ Իլհամ Ալիեւի «դեմարշը» չի ազդել խնդրի լուծման վերաբերյալ միջնորդների պատկերացումներին, եւ դրանք մնում են անփոփոխ: Իսկ դա Ադրբեջանի համար հավասարազոր է պատրանքների պսակազերծման: Եվ բնական է, որ ստեղծված՝ Իլհամ Ալիեւի համար փակուղային իրավիճակում,- քանի որ նա երկու ընտրություն ունի՝ հրաժարվել «մոտ մեկ տասնյակ առաջարկություններից» կամ մինչեւ վերջ համառել,- «նորին նախագահական մեծությունը» պարզապես սկսել է կորցնել իրականության ընկալումը եւ ընկել հեքիաթների աշխարհը:

Այստեղ նա տեսնում է «բարոյալքված եւ կիսասոված հայկական բանակ», «Հայաստանում խորացող դեմոգրաֆիկ ճգնաժամ» եւ այլն, ինչը սեփական հանրությանն է մատուցում նախանձելի երեւակայությամբ: Կամ՝ հեքիաթասացի ոգեւորությամբ:

Դրանից, մինչդեռ, ոչինչ չի փոխվում: Մի կողմ թողած «նախագահական մեծությանը» չպատշաճող պոռոտախոսությունը, նման ելույթները տրամաբանորեն պետք է հարուցեն ադրբեջանական հանրության զարմանքը. «Լավ, եթե հայ իրականությունն այդքան անուժ է, ապա ի՞նչն է խանգարում, որ «Լեռնային Ղարաբաղն ազատագրվի», եւ մենք վերականգնենք մեր արժանապատվությունը»:

Ըստ երեւույթին, նման տրամադրությունների պակաս Ադրբեջանում արդեն չի զգացվում: Այդ իսկ պատճառով էլ իշխող վերնախավը վերջերս շրջանառության է դրել վարկած, ըստ որի «Հայաստանին Ռուսաստանն աջակցում է զենքով, ԱՄՆ-ը՝ ֆինանսապես, Ֆրանսիան՝ քաղաքականապես»: Միաժամանակ էլ, սակայն, ասվում է, որ հիշյալ «երկրների համար ավելի գրավիչ է Ադրբեջանը»:

Որ քաղաքական այդ կարծրատիպը քննադատության չի դիմանում, պարզ է առաջին հայացքից: Քանի որ սովորաբար աջակցում են առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող երկրին: Օրինակների համար հեռուն գնալ պետք չէ, եւ չենք էլ ուզում վկայակոչումներ անել: «Նորին նախագահական մեծությունն» իր մանկական հիվանդությամբ, իրոք, սեփական ժողովրդի մասին ձեւավորում է, մեղմ ասած, ոչ նպաստավոր կարծիք: Քանի որ քաղաքական կարծրատիպի հակառակ երեսն այն է, որ միջնորդ երկրներն Ադրբեջանից «քամում են՝ ինչ իրենց պետք է, բայց փոխարենը չեն օգնում ԼՂ հարցում»:

Կարելի է, գուցե, վարկածել, որ դրանով Իլհամ Ալիեւը նպատակ է հետապնդում հանրությանը ներշնչել, որ Ադրբեջանը չի կարող ընդդիմանալ «այս աշխարհի ուժեղներին»: Կամ նրբորեն ակնարկում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցում հայկական կողմի տեսակետն այնքան հիմնավոր է, որ նույնիսկ Ադրբեջանի գրավչությամբ եւ նավթագազային պաշարներով հնարավոր չէ այն զուգակշռել: Դա էլ հնարավոր տարբերակ է: Ինչքան չլինի՝ նա ժամանակին ՄԳԻՄՕ-ում մի-երկու դաս առած կլինի: Իսկ եթե գումարենք նաեւ ժառանգաբար փոխանցվածը, ապա գուցե Իլհամ Ալիեւի մեծախոսությունները համարվեն այն, ինչ նման դեպքերում ուղղակի չեն ասվում:


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| *Աճուրդով օտարվող գույք* | | | | |
| 1 | Մաշտոցի 1շենքի թիվ 38 տարածք | ոչ բնակելի տարածք | 13.20 | 1,500,000 |
| 2 | Նալբանդյան 110 շենք թիվ 58 տարածք | ոչ բնակելի տարածք | 10.90 | 750,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ նոյեմբերի 25-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2011թ նոյեմբերի 25-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***



### Վաճառվում է

**Range Rover Westminster**

2003/2004 թթ., մոխրագույն,
շարժիչը՝ 4,4 լ., (full):
Մաքսազերծված չէ:
Գերազանց վիճակ:
Գինը՝ պայմանագրային:
**Հեռ.՝ 096 92 34 15:**



### Վաճառվում է

**Daewoo Matiz Best**

մակնիշի ավտոմեքենա 2008 թ.,
շարժիչը 1լ, վազքը՝ 4500 կմ,
արծաթագույն, ունի
կոնդիցիոներ, հայելիները
եւ ապակիները
էլեկտր., (full), գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (091) 32-88-89**


## Հայաստանում կանցկացվեն Եգիպտոսի մշակույթի օրեր.

### Նոյեմբերի 4-11

Հայաստան–Եգիպտոս մշակութային համագործակցության, ինչպես նաեւ պետությունների կողմից ստորագրված միջկառավարական համաձայնագրի եւ միջգերատեսչական ծրագրերի շրջանակներում երկու երկրներում փոխադարձաբար անցկացվում են մշակույթի օրեր: 2010 թ. սեպտեմբերի 17-23-ը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում անցկացվել են հայկական մշակույթի օրեր, իսկ ս. թ. նոյեմբերի 4-11-ը Եգիպտոսի մշակույթի օրեր են անցկացվում Հայաստանում: Այդ առթիվ Հայաստան է ժամանել եգիպտական պատվիրակությունը /թվով 46 մասնակից/՝ ԵԱՀ մշակույթի նախարարի առաջին տեղակալ /արտաքին հարաբերությունների գծով/ Հուսամ Սաադ Զաղլուլ Նասսարի գլխավորությամբ: Հայաստանում Եգիպտոսի մշակույթի օրերի շրջանակներում կստորագրվի «ՀՀ մշակույթի նախարարության եւ ԵԱՀ մշակույթի նախարարության միջեւ 2011-2013 թթ. մշակութային համագործակցության մասին» գործնական ծրագիր:

Նախատեսվում է նաեւ.

▼ **ցուցահանդեսային ծրագիր**

Հայաստանի ազգային պատկերասրահում /նոյեմբերի 5-10/ կբացվեն եգիպտական արվեստի, եգիպտահայ մեծանուն երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի աշխատանքների ցուցահանդեսները /բացումը՝ նոյեմբերի 5-ին, ժամը 13:00/,

▼ **Կահիրեի օպերայի եւ բալետի թատրոնի ներկայացումներ**

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում /նոյեմբերի 7-ին, ժամը՝ 19:00-ին/ կներկայացվեն Կահիրեի օպերայի եւ բալետի ընկերության «Անկախ ամեն ինչից» եւ «Եգիպտական գիշերներ» մեկ գործողությամբ երկու բալետները,

▼ **վարպետության դասեր՝ մանուկների համար**

Խնկո – Ապոր անվան մանկական ազգային գրադարանում /նոյեմբերի 7-10/ մանուկների համար կներկայացվեն «Կայան» խամաճիկների թատրոնի, ստվերների թատրոնի եւ օրիգամիի արվեստները, նրանց հետ կանցկացվեն պարապմունքներ: Երեխաների մասնակցությամբ կբեմադրվի ներկայացում եւ կցուցադրվի Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում /նոյեմբերի 9-ին, ժամը՝ 14:00-ն/,

▼ **մնջախաղի ներկայացում**

Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում /նոյեմբերի 8-ին, ժամը՝ 19:00/ ներկայացումով հանդես կգա աշխարհի 20 լավագույն մնջախաղի վարպետներից մեկը համարվող Ահմեդ Նաբիլը,

▼ **ֆիլմերի ցուցադրություններ**

«Նաիրի» կինոթատրոնում /նոյեմբերի 7-10-ը/ կցուցադրվեն «Էլ մոուլեդ» /բացման ֆիլմ՝ ժամը 15:30-ն/, «Ճակատագիր», «Մեկնման ուրբաթ», «Բարձրախոս», «Մումիա» եգիպտական հինգ ֆիլմերը: Եգիպտոսի հայտնի հայազգի դերասանուհի Լիզ Սարգսյանը հանդիպումներ կունենա Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողների հետ: Կհանդիպի նաեւ «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի կազմակերպիչների հետ:

Երկկողմ պայմանավորվածության համաձայն՝ Եգիպտոսի մշակույթի օրերի ընթացքում Հայաստանի գրողների միությունում /նոյեմբերի 5-ին, ժամը՝ 11:00/ տեղի կունենա նաեւ ԵԱՀ մշակույթի նախարարի խորհրդական, արտաքին հարաբերությունների գործակալության ղեկավար, բանաստեղծ Հուսամ Նասսարի բանաստեղծությունների «Մոլորված՝ փնտրում եմ երկիր« խորագրով ժամանակակից պոեզիայի ժողովածուի հայերեն թարգմանության շնորհանդեսը /արաբերենից տողացի թարգմանությունը՝ Հովհաննես Ասատրյանի, բանաստեղծության վերածումը՝ Հովիկ Հովեյանի/:

Եգիպտական պաշտոնական պատվիրակությունը մշակույթի օրերի շրջանակներում կունենա նաեւ մի շարք պաշտոնական հանդիպումներ հանրապետության պետական պաշտոնյաների հետ:

2011 թ. նոյեմբերի 4-11-ը Հայաստանում կայանալիք Եգիպտոսի մշակույթի օրերը լուսաբանելու նպատակով եգիպտական պաշտոնական պատվիրակությանը կուղեկցեն նաեւ եգիպտական առաջատար օրաթերթերի լրագրողներ:


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1 արձանագրությամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՌՑ-ՊԸԾՁԲ 11/1***

Պատվիրատուն՝ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել աուդիտորական ծառայության ձեռքբերման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու աուդիտորական ծառայության ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2012 թվականի փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ՀՀ, ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով, մինչեւ 11.11.2011թ. ժամը 12:00-ը: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձեւով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հրավերի թղթային տարբերակը հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ՀՀ, ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով, մինչեւ 11.11.2011թ. ժամը 12:00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոնե ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի ,Գնումների աջակցման կենտրոնե ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ***


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝3.11..2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: